ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԽՈՍՐՈՎԱԴՈՒԽՏ ԱԶԱՏՅԱՆ

ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

ՀՏԴ 328.1(042.4)
ԳՄԴ 66.033.111գ7
Ա 224

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ գիտական խորհուրդը:

Մասնագիտական խմբագիր՝
քաղաքական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ս. Ալեքսանյան

Գրախոսներ՝
քաղաքական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Փ. Ենգոյան
քաղաքական գիտ. թեկնածու, դոցենտ Ա. Գ. Սարգսյան

Խոսրովադուխտ Գարեգինի Ազատյան
Ա 224 Պառլամենտարիզմը ժամանակակից աշխարհում: Ուսումնամեթոդական ձեռնարկ/ Խ. Գ. Ազատյան: -Եր.: ԵՊՀ հրատ., 2024, 104 էջ:

Սույն աշխատությունում ուսումնասիրվում են պառլամենտարիզմի ծագումն ու տեսահայեցակարգային հիմքերի էվոլյուցիան, «պառլամենտարիզմ» հասկացության մեկնաբանությունները, պառլամենտարիզմի և ժողովրդավարության հարաբերակցության հիմնախնդիրը, Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրների կառավարման համակարգերի արդիականացման հիմնախնդիրները, պառլամենտարիզմի առանձնահատկությունները հետխորհրդային երկրների փոխակերպման պայմաններում: Ձեռնարկը կարող է օգտակար լինել պառլամենտարիզմի ուսումնասիրությունների համար ինչպես տեսական, այնպես էլ գործնական տեսանկյունից:

Այն նախատեսված է բուհերի ուսանողների, հետազոտողների և պառլամենտարիզմի հիմնախնդրով զբաղվող մասնագետների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 328.1(042.4)
ԳՄԴ 66.033.111գ7

ISBN 978-5-8084-2661-0
https://doi.org/10.46991/YSUPH/9785808426610

© ԵՊՀ հրատ., 2024
© Ազատյան Խ. Գ., 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....5
ԹԵՄԱ ԱՌԱՋԻՆ
ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՇՐՋԱՓՈՒԼԵՐԸ 8
ԹԵՄԱ ԵՐԿՐՈՐԴ
ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ
ՏԵՍԱՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ 20
ԹԵՄԱ ԵՐՐՈՐԴ
«ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....32
ԹԵՄԱ ՉՈՐՐՈՐԴ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ 45
ԹԵՄԱ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 61
ԹԵՄԱ ՎԵՑԵՐՈՐԴ
ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ
ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 70
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....100
SUMMARY 102
РЕЗЮМЕ 103

ԱՌԱՋԱԲԱՆ

«Պառլամենտարիզմ» և «խորհրդարան» երևույթները ժամանակակից քաղաքական գիտության այժմեական հիմնախնդիրների թվին են դասվում: Ներկայումս՝ ժողովրդավարացման երրորդ ալիքի պայմաններում, փաստ է, որ կառավարման ներկայացուցչական ձևն ամենատարածվածն է աշխարհում: Պատմական փորձը ցույց է տալիս, որ կառավարումը կարող է արդյունավետ համարվել միայն այն դեպքում, երբ այն կրողների իշխանությունը սահմանափակված է ու վերահսկելի: Ժողովրդավարական քաղաքական իշխանության կարևորագույն բնութագրիչներից մեկը քաղաքական ինստիտուտների գործառնումն է ներկայացուցչականության երաշխավորման պայմաններում: Պետական կառավարման համակարգի կայուն գործառնման և քաղաքական որոշումների կայացման լեգիտիմության ապահովման տեսանկյունից կենտրոնական դերակատարություն ունի խորհրդարանը: Այսօր դժվար թե գտնվի մի պետություն, որտեղ խորհրդարանի մասին առհասարակ խոսք չգնա: Միջխորհրդարանական միության տվյալների շտեմարանում (IPU) հաշվվում է այդպիսի 193 երկիր: Անկասկած, դրանց թվում ներառված են նաև ոչ ժողովրդավարական համակարգեր ունեցող պետություններ: Բացի դրանից՝ պառլամենտարիզմը գոյություն ունի ոչ միայն ազգային-պետական քաղաքականության, այլև տարածաշրջանային և վերպետական մակարդակներում: Որպես դասական օրինակ կարելի է նշել Եվրոպական միության ազդեցիկ կառույցներից մեկը՝ Եվրոպական խորհրդարանը: Միջազգային քաղաքականության մեջ պառլամենտարիզմը

դրսևորվում է նաև խորհրդարանական տարբեր ժողովների տեսքով:

Ի տարբերություն «խորհրդարան» հասկացության, որի հետազոտումը գիտական շրջանակների կողմից վաղ պատմություն ունի և իր գոյության պահից սկսած մշտապես գտնվել է ուշադրության կենտրոնում, «պառլամենտարիզմը» համեմատաբար երիտասարդ հասկացություն է: Չնայած դրան՝ արևմտյան զարգացած ժողովրդավարական երկրներում արդեն պառլամենտարիզմի տեսության շուրջ ծավալված բուռն բանավեճերի արդյունքում հետպառլամենտարիզմի և նեոպառլամենտարիզմի մասին տեսություններ են մշակվել: Այս առումով դասընթացը հնարավորություն է տալիս համապարփակ դիտարկել նշված տեսությունները:

Պառլամենտարիզմի նկատմամբ աճող հետաքրքրությունը կապված է նաև այն փոփոխությունների հետ, որոնք տեղի են ունենում ժամանակակից աշխարհում: Երկբևեռ աշխարհակարգի փլուզումից հետո պատմական նոր իրականություն ձևավորվեց: Աշխարհակարգի փոփոխությունը հանգեցրեց ուժային վերադասավորումների և արմատական քաղաքական տեղաշարժերի: Նախկին սոցիալիստական ճամբարի տարածքում տոտալիտար քաղաքական համակարգերի փլուզումը, արագ զարգացող արդիականացման գործընթացները շոշափում էին հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտները, մասնավորապես քաղաքական բնագավառը: Նորանկախ երկրների քաղաքական էլիտաները ստիպված էին մտածել կառավարման ձևի ընտրության մասին, որը հստակ կամրագրեր պետական իշխանության յուրաքանչյուր մարմնի, այդ թվում՝ խորհրդարանի տեղը քաղաքական համակարգում: Անցումային փուլի պայմաններում խորհրդարանի դերը սո-

ցիալ-քաղաքական վերափոխումներում էականորեն մեծանում է, քանի որ այդ ժամանակ ներկայացուցչական մարմինները վերածվում են տարբեր քաղաքական ուժերի միջև ինչպես բանավեճերի, այնպես էլ համագործակցության վայրերի: Դրանք ժամանակակից ժողովրդավարության գործառնության առաջնորդող, զարգացման հզոր ներուժ և փոփոխվող պայմաններին հարմարվելու մեծ կարողություն ունեցող կազմավորումներ են: Մյուս կողմից՝ փոխակերպվող երկրների պետական ինստիտուտների գործառնության անկայուն բնույթը, պայմանավորված նոր պայմաններում աշխատելու փորձի բացակայությամբ, խնդիրներ է առաջացնում խորհրդարանի և գործադիր իշխանության հարաբերակցության հարցում, մի շարք հակասություններ են ծագում պետական համակարգի գործառնության սահմանադրական սկզբունքների և գործնականում դրանց իրականացման միջև: Այսպիսով, պառլամենտարիզմի զարգացման ժամանակակից փորձի ուսումնասիրումը պարարտ հող է նախապատրաստում ուսանողների համեմատական վերլուծության համար, ինչպես նաև հնարավորություն է ստեղծում վեր հանելու տարբեր երկրներում դրա հաջողության կամ էլ ձախողման պատճառները:

ԹԵՄԱ ԱՌԱՋԻՆ
ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԸ

Մինչև քաղաքագիտության՝ որպես առանձին գիտաճյուղի ձևավորումը, պառլամենտարիզմի հետազոտությունը հիմնականում զարգանում էր պետականագիտության շրջանակներում՝ գտնվելով եվրոպական պատմաբանների և իրավագետների ուշադրության կենտրոնում: Վերջիններս հիմնականում զբաղվում էին բրիտանական պառլամենտարիզմի առանձնահատկությունների ուսումնասիրմամբ:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ եվրոպական երկրները մեկը մյուսի հետևից կառավարման խորհրդարանական համակարգեր ներդրեցին, պառլամենտարիզմի էության հետ կապված բազմաթիվ հարցեր առաջացան, մասնավորապես որո՞նք են դրա հաջողության համար անհրաժեշտ սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանները, որքանո՞վ է բրիտանական օրինակն ընդունելի մայրցամաքի մյուս երկրների համար և այլն: 1945 թվականից հետո այս հարցերի պարզաբանումն առավել հրատապ դարձավ, խորհրդարանական ժողովրդավարության գաղափարին նոր բովանդակություն հաղորդվեց, ինչը պայմանավորված էր 1920-1930-ական թթ. եվրոպական շատ երկրների՝ ավտորիտար և ֆաշիստական վարչակարգերին հետվերադարձով, դիկտատուրայի և միակուսակցականության հաստատմամբ:

Այսպիսի հետքայլերի պատճառները հետագայում հանգամանորեն ուսումնասիրվեցին ժողովրդավարության ալիքների տեսության շրջանակներում:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո պառլամենտարիզմի քաղաքական հաջողությունները նպաստեցին, որպեսզի առաջընթաց գրանցվի նաև գիտական հետազոտությունների ոլորտում: Արդեն իսկ 1950-ական թթ. արևմտյան քաղաքագիտական մտքի շրջանակներում հիմնարար աշխատանքներ ծնվեցին խորհրդարանական կառավարման համակարգի, քաղաքական կուսակցությունների և խորհրդարանների վերաբերյալ: Մյուս երկու տասնամյակներն աչքի ընկան աշխատանքների բովանդակության փոփոխմամբ: Հիմնական հարցադրումները վերաբերում էին դասական լիբերալ-ներկայացուցչական պառլամենտարիզմի և դրա բովանդակության վերաձևակերպմանը զանգվածային ժողովրդավարության զարգացման պայմաններում: Որպես որոշիչ ուղենիշ մեծամասամբ դիտարկվում էր վեստմինիստերյան մոդելը:

Այսպիսով, պառլամենտարիզմի՝ որպես ժամանակակից քաղաքական գիտության հետազոտության կարևորագույն ուղղություններից մեկի շուրջ մասնագիտական հետաքրքրության բուռն մեկնարկն ընդունված է համարել 20-րդ դարի 70-80-ական թթ.: Սա մի շրջան էր, երբ այն մի կողմից սուր քննադատության էր ենթարկվում համակարգային տեսության ներկայացուցիչների, մյուս կողմից պաշտպանվում էր վերջիններիս հակառակորդների կողմից: Պառլամենտարիզմի վերաբերյալ ուսումնասիրությունները, որոնք նախկինում ոչ համակարգված և ապրիորի էին, համակարգվեցին և նոր հիմքերի վրա դրվեցին: Սա պայմանավորված էր ձևափոխված աշխարհի ընդհանուր օրինաչափություններով՝ ժողովրդավարության զարգացմամբ, գործադիր իշխանության նկատմամբ վերաբերմունքի փոփոխությամբ, քաղաքագիտության մեջ առանձին ենթաուղղությունների, մասնավորապես արդիա-

կանացման, ինստիտուցիոնալացման առաջացմամբ և զարգացման աստիճանով: Այսօր արդեն խոսք է գնում նոր՝ համեմատական պառլամենտարիզմ, ենթաձյուղի մասին, որը լայն հնարավորություններ է տալիս փոխակերպվող հասարակություններում, մասնավորապես ավտորիտարից ժողովրդավարականի անցման համակարգերում պառլամենտարիզմի առանձնահատկություններն ուսումնասիրելու համար:

Պառլամենտարիզմի տեսության հարստացումն ու փոփոխումն ընթացել է համանուն երևույթի զարգացմանը զուգահեռ: Ժամանակակից պառլամենտարիզմը հասարակաքաղաքական երկարատև զարգացման արդյունք է: Այս բազմաշերտ ֆենոմենի ակունքներում ընկած տեսահայեցակարգային հիմքերի վերհանումը հնարավոր է դրա կայացման հաջորդականությունն ու ժամանակագրությունը ներկայացնելու ճանապարհով: Ժամանակակից քաղաքագիտական գրականության մեջ պայմանականորեն առանձնացվում են պառլամենտարիզմի 3 պատմական ձևեր՝ անտիկ, միջնադարյան և ժամանակակից: Այս տարանջատմանը համապատասխան կարելի է առանձնացնել նշված երևույթի զարգացման բովանդակության բացահայտմանն ուղղված հետևյալ փուլերը:

Առաջին՝ պրոտոպառլամենտարիզմի կամ վաղ պառլամենտարիզմի փուլն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև 10-րդ դարի սկզբներն ընկած ժամանակահատվածը: Այստեղ կարելի է տեսնել պառլամենտարիզմի սաղմնային դրսևորումները: Ք.ա. 1-ին հազարամյակի կեսերին, օրինակ, Հին Հունաստանում և Հին Հռոմում ձևավորվել էին սկզբունքորեն նոր՝ բնույթով ժողովրդավարական իշխանական համակարգեր, որոնցում առաջին անգամ նկատվում էին իշխանության օրենսդիր ճյուղի դրսևորումներ («Չորս հարյուրի խոր-

հուրդը» Սոլոնի օրոք, «Հինգ հարյուրի խորհուրդը» Կլիսթենեսի օրոք, Սենատը՝ Հին Հռոմում և այլն):

Պառլամենտարիզմի զարգացման 2-րդ փուլն ընդգրկում է 10-րդ դարի սկզբներից մինչև 15-րդ դարն ընկած ժամանակահատվածը և բնորոշվում որպես «դասային-ներկայացուցչական» պառլամենտարիզմի շրջան. վաղ խորհրդարանները ձևավորվում էին որպես դասային ժողովներ: Այս շրջանը հայտնի է իշխանության ներկայացուցչական մարմինների նախնական ինստիտուցիոնալացմամբ: Այսպես, 1215 թ. քաղաքական պայքարի շնորհիվ, բարոնները և հոգևորական բարձր դասը Անգլիայի թագավոր Հովհաննես Առաջին Անհողինին ստիպեցին ստորագրել «Ազատությունների մեծ խարտիան», որը փաստացիորեն սահմանափակեց կենտրոնական թագավորական իշխանության լիազորությունները: Ձևավորվեց ժամանակակից խորհրդարանի սաղմերից մեկը՝ «Թագավորական ընդհանուր խորհուրդը»: Առանց վերջինիս համաձայնության՝ թագավորը չէր կարող միջամտել խոշոր ֆեոդալների ներքին գործերին, հարկեր գանձել և այլն: Այսպիսով, ֆեոդալները թագավորի վրա ազդելու որոշակի միջոցներ ձեռք բերեցին: Մինչ օրս «Ազատությունների մեծ խարտիան» անգլիական իրականության մեջ սահմանադրական կարևորագույն օրենք է համարվում, արդի բրիտանական իրավունքի հիմնաքարերից մեկը: Այս շրջանի ծնունդ են Եվրոպայի ամենահին խորհրդարանը՝ իսլանդական Ալթինգը, որը հիմնադրվել է 930 թ., ինչպես նաև իսպանական կորտեսները, որոնք ի հայտ են եկել 1137 թ., սակայն պառլամենտարիզմի հայեցակարգային հայրենիքը Ֆրանսիան է: Այն ծագում է 12-րդ դարում կիրառում գտած հին ֆրանսերեն պառլամենտ բառից, որը նշանակում է «խորհրդակցություն», «ժողով», «բանակցու-

թյուններ»: Ժողովրդական ներկայացուցչական մարմինների նախատիպեր Ֆրանսիայում ի հայտ են եկել 1230 թվականից սկսած: Առաջին խորհրդարանը՝ Գլխավոր շտատների տեսքով, գումարվել է Ֆիլիպ 4-րդ Գեղեցիկի կողմից 1302 թ. երեք դասերի՝ հոգևորականությանը, ազնվականությանը և քաղաքացիներին Հռոմի պապի՝ Ֆրանսիայի ներքին գործերին միջամտելու ջանքերի դեմ միավորելու նպատակով: Հարկ է նկատել, որ դեռևս Հին Հայաստանում գործել է դասային համերաշխության երաշխավորմանն ուղղված այնպիսի մեխանիզմ, ինչպիսին աշխարհաժողովն է: Հայաստանի բարձրագույն խորհրդակցական ժողովում ներկայացված են եղել երկրի գրեթե բոլոր դասերն ու խավերը՝ արքայից մինչև շինականներ: Աշխարհաժողովն իրավասու էր մշակելու և ընդունելու բոլորի համար պարտադիր կանոններ, օրենքներ, լուծելու պետական նշանակության կարևորագույն հարցեր, ինչպիսիք են պատերազմ հայտարարելը, կաթողիկոսի ընտրությունը և անգամ թագավորին գահընկեց անելը: Այսպես՝ 449թ. Արտաշատում գումարված հայ ավագանու՝ նախարարների և բարձրաստիճան հոգևորականների ժողովը մերժողական պատասխան տվեց Հազկերտ Բ-ի՝ քրիստոնյա հպատակներին զրադաշտություն պարտադրող հրովարտակին:

3-րդ փուլում, որն ընդգրկում է 16-18-րդ դարերը, դրվեցին իշխանությունների տարանջատմամբ բնորոշվող ժամանակակից պառլամենտարիզմի սյուները: Բուրժուական պառլամենտարիզմ անվանմամբ հայտնի այս ժամանակահատվածը առանձնանում է նրանով, որ ընթանում էին 2 իրարամերժ, սակայն փոխպայմանավորված գործընթացներ: Մի կողմից նկատվում էին գործադիր իշխանության ուժեղացման և ներկայացուցչական մարմինների դերի թուլացման միտումներ:

Հետաքրքրական է, որ դեպառլամենտարիզացումն առավել վառ արտահայտվում էր պառլամենտարիզմի «ծննդավայրեր» Ֆրանսիայում, որտեղ շուրջ 200 տարի Գլխավոր շտատներ չգումարվեցին, և Անգլիայում, որտեղ 16-17-րդ դարերում թագավորները ձգտում էին թուլացնել խորհրդարանի դերը: Երկու դեպքում էլ նման քաղաքականությունը հանգեցրեց հեղափոխությունների, իսկ թագավորները ենթարկվեցին մահապատժի՝ 1649 թ.՝ Լոնդոնում, 1789 թ.՝ Փարիզում: Մյուս կողմից բուրժուական հեղափոխություններով դրվում էին ժամանակակից խորհրդարանի՝ որպես համազգային ներկայացուցչական, օրենսդրական և վերահսկողական գործառույթներով օժտված մարմնի ձևավորման հիմքերը: Արևմտյան Եվրոպայի երկրների մեծ մասում ընթանում էին քաղաքացիական հասարակության և իրավական պետության կայացման գործընթացներ: Նշյալ փոփոխությունները տեղի էին ունենում բացարձակության և իշխանության հին ինստիտուտների և սոցիալ-քաղաքական հին կարգերի դեմ դաժան մրցակցության պայմաններում: Թագավորական իշխանության և խորհրդարանի միջև հակասությունն առավել սուր դրսևորվեց Անգլիայում 17-րդ դարում՝ Յակով 1-ին Ստյուարտի և նրա որդի Կառլ 1-ինի կառավարման շրջանում, երբ խորհրդարանը քաղաքական ընդդիմության կողմից վերածվել էր բացարձակ միապետության դեմ ուղղված հզոր կենտրոնի, իսկ հետագայում արդեն հեղափոխության կենտրոնական դերակատարի: Պատմական կարճ ժամանակահատվածում Անգլիայում տեղի ունեցավ երկու հեղափոխություն և կառավարման համակարգի փոփոխություն. երկիրը միապետությունից անցում կատարեց հանրապետության: 1688 թ. Փառահեղ հեղափոխությունը վերջ տվեց երկրի համար փոթորկուն ժամանակաշրջանին, իսկ 1689 թ. ընդուն-

ված «Իրավունքների մասին Բիլլը» (այսուհետ՝ Բիլլ) ամրագրեց պառլամենտարիզմի հաղթանակը երկրում՝ հաստատելով սահմանադրական միապետություն: Պահպանելով թագավորական իշխանությունը՝ «Բիլլը» սահմանափակում էր նրա լիազորությունները խորհրդարանի իշխանությամբ և մի շարք այլ սահմանադրական նորմերով: Այն կարգավորում էր խորհրդարանի գործունեությունը՝ ամրագրելով վերջինիս իրավունքները, պատգամավորների ձայնի ազատության իրավունքը, խորհրդարանի կանոնավոր նիստերի անցկացման կարգը և այլն: Հետագայում այս իրադարձությունների շնորհիվ՝ Անգլիան ստացավ «պառլամենտարիզմի ինստիտուցիոնալացման հայրենիք» տիտղոսը:

Ֆրանսիայում պառլամենտարիզմի զարգացման տեսանկյունից առանցքային են 1789-1794 թթ., երբ Բուրժուական մեծ հեղափոխությունը հանգեցրեց «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի ընդունմանը», միապետության վերջնական տապալմանն ու Փարիզի կոմունայի ստեղծմանը: 1792 թ. Ֆրանսիան հռչակվեց Հանրապետություն՝ հիմնված ժողովրդավարական սկզբունքների վրա:

Ինչպես տեսնում ենք, արևմտաեվրոպական քաղաքակրթության ծնունդ պառլամենտարիզմի կայացումը զուգահեռաբար է ընթացել Ֆրանսիայում և բրիտանական կղզում: Բացի այդ՝ դրա պատմական զարգացման օրինաչափությունների ներկայացումից պարզ է դառնում, որ այդ գործընթացը անհարթ չի ընթացել. եղել են հետընթացներ, թագավորական իշխանության ուժեղացման շրջաններ: Օրինակ՝ Ն. Բոնապարտի կառավարման տարիներին խորհրդարանը փաստացիորեն չէր գործում: 1814 թ. մինչհեղափոխական միապետության վերականգնումից հետո՝ 1830 թ. սկսած, հանրային ճնշման

տակ թագավորի լիազորությունները խիստ կրճատվեցին: Նա ուներ գործադիր լիազորություններ, սակայն օրենսդրական իրավասությունները կիսում էր երկպալատանի խորհրդարանի հետ:

4-րդ փուլը սկսում է 19-րդ դարի սկզբներից և շարունակվում մինչ օրս: 19-րդ դարն ընդունված է համարել լիբերալ պառլամենտարիզմի ծաղկման շրջան, որի հետևանքը եղավ 19-րդ դարի վերջին պրոլետարիատի ծնունդն ու մուտքը խորհրդարաններ: Չնայած բուրժուական խորհրդարանի և աշխատավորների շարժման թշնամական հակասություններին՝ ընտրական իրավունքի ժողովրդավարացման շնորհիվ խորհրդարանը պրոլետարներին ևս, վերջապես, ներգրավեց քաղաքական գործընթացներում: Այս պատմական պահը ծնունդ տվեց ժողովրդավարական պառլամենտարիզմին: 20-րդ դարի սկզբին ընտրական ցենզերի աստիճանական վերացումով խորհրդարանը որակապես փոխվեց և դարձավ իրապես ժողովրդին ներկայացնող կառույց: Այս շրջանը բնորոշվում է խորհրդարանի՝ որպես եվրոպական պետական ապարատի անբաժանելի մասի վերջնական ինստիտուցիոնալացման փուլ:

Ներկայումս երկու իրարամերժ գործընթացներ են տեղի ունենում. մի կողմից աշխարհի շատ պետություններում կոլեգիալության կարգով որոշումների կայացման հրամայականով պայմանավորված՝ խորհրդարանների լիազորություններն ավելի են մեծանում, մյուս կողմից ակնհայտ է, որ հաճախ աշխարհի վրա ազդող կարևորագույն որոշումները կայացնում են առանձին անհատներ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Բացահայտել պառլամենտարիզմի տեսահայեցակարգային հիմքերը՝ դրա զարգացման փուլերի հաջորդականության և պատմական ձևերի ներկայացման համատեքստում:
2. Ներկայացնել նախապառլամենտարիզմի և «դասային-ներկայացուցչական» պառլամենտարիզմի զարգացման շրջանների տարբերություններն ու նմանությունները:
3. Վերլուծել բուրժուական պառլամենտարիզմի առանձնահատկությունները:
4. Դիտարկել ժամանակակից լիբերալ պառլամենտարիզմի ծաղկման շրջանը:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Պառլամենտարիզմի տեսահայեցակարգային հիմքերը:
2. Լիբերալ պառլամենտարիզմի առանձնահատկությունների վերլուծություն:
3. Ժամանակակից աշխարհում պառլամենտարիզմի տրանսֆորմացման և տարածման միտումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ենգոյան Ա.,** «Գաղափարախոսություն» հասկացության քաղաքագիտական մեկնաբանությունը, Եր., 2014, 56 էջ:
2. **Լինց Խ., Ստեփան Ա.,** Ժողովրդավարությանն անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները, Կովկասի ինստիտուտ, Եր., 2011, 619 էջ:
3. **Հակոբյան Հ.,** Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2007, 673 էջ:

4. **Միրումյան Կ.**, Քաղաքական ուսմունքների պատմություն, ուս. ձեռնարկ բուհերի համար, Եր., 2006, 544 էջ:
5. **Շաքարյան Հ.,** Պառլամենտարիզմը իբրև մշակութաբանական երևույթ, Եր., 1995, 160 էջ:
6. **Սարգսյան Ա.,** Քաղաքական մասնակցության հիմնախնդիրները ժողովրդավարական համախմբման փուլում, Եր., 2019, 163 էջ:
7. **Айзенштат М.,** Западноевропейский парламентаризм XVIII-XIX вв.: этапы становления и развития, М., 2001, 100 с.
8. **Аристотель,** Политика, https://be2.aldebaran.ru/get_file/18556679/-79933872/Aristotel__Yeksklyuzivnaya_Politika.a6.pdf?md5=7017-b0d0b18b588109728a90be6d0d98&t=1650561691&s=yes, հասանելի՝ 15.07.2020:
9. **Аристотель,** Сочинения, т. 4, М., 1983, 830 с.
10. **Астафичев П. А.,** Народное представительство и парламентаризм: конституционные проблемы. Орёл, 2004, 364 с.
11. **Богданова Н. А.,** Парламентское право в системе конституционного права // "Парламентские процедуры: проблемы России и зарубежный опыт". М., 2003, 400 с.
12. **Булаков О. Н.,** Двухпалатный парламент Российской Федерации, litres.ru/o-bulakov/dvuhpalatnyy-parlament-rossiyskoy-federacii/chitat-onlayn/, հասանելի՝ 12.01.2018:
13. **Вебер М.,** Политика как призвание и профессия, https://gtmarket.ru/library/articles/6064, հասանելի՝ 25.01.2021:
14. **Гоббс Т.,** Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского, https://www.civisbook.ru/files/File/-Gobbs_Leviafan.pdf, հասանելի՝ 15.06.2020:

Գիտական հոդվածներ

1. **Ալեքսանյան Ա.,** Դեմոկրատիայի ցիվիլիարխիկ չափման մասին, Եր., ԵՊՀ հրատ., 2019, № 2 (29), էջ 52-60:

2. **Գալստյան Խ.,** Քաղաքական երկխոսության ինստիտուցիոնալացման հիմնախնդիրները ՀՀ-ում, «Բանբեր Երևանի համալսարանի, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն», Եր., ԵՊՀ հրատ., 2016, № 3 (21), էջ 57-67:
3. **Մարգարյան Մ.,** Ժողովրդավարացման երրորդ ալիք. անցումային հասարակությունների գծային զարգացման բնույթը, http://lraber.asj-oa.am/156/1/2005-2(126).pdf, հասանելի՝ 24.07.2019:
4. **Մարգարյան Մ.,** Ժողովրդավարության համախմբումը, որպես ժողովրդավարական անցման մոդելի կայացման գրավական, https://mmmargaryan.wordpress.com/2019/05/12/%D5%AA%D5%B8%D5%B2%D5% , հասանելի՝ 25.12.2019:
5. **Մարգարյան Մ.,** ՀՀ քաղաքական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրը խորհրդարանական կառավարման պայմաններում, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2017, թիվ (2), էջ 115-124:
6. **Մարգարյան Մ.,** Քաղաքական լպիրշություն, http://geopolitics.am/archives/12292, հասանելի՝ 28.03.2021:
7. **Մարգարով Ա.,** Ժողովրդավարություն և ժողովրդավարացում, «Քաղաքագիտություն» ուս. ձեռնարկ, Եր., ԵՊՀ հրատ., 2006, էջ 383-404:
8. **Մանուչարյան Հ.,** Հայոց պետության կառավարման և կառուցվածքի ձևերի՝ հնդկահայ լուսավորիչների հայեցակարգը, «Բանբեր Երևանի համալսարանի, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն» 134.6, Եր., ԵՊՀ հրատ., 2011թ., էջ 50-61:

Համացանցային աղբյուրներ

1. Հայոց խորհրդարանների պատմություն (համառոտ ակնարկ), http://www.parliament.am/parliament.php?id=parliament&lang=arm, հասանելի՝ 15.06.2020:

2. Պառլամենտարիզմը Հայաստանում, https://ge.boell.org/en/2018/11/07/parhlamentarizme-hayastanowm, հասանելի՝ 25.04.2021:
3. Konferenzbericht „Parteien und Parteiensystem in jungen Demokratien“ KAS-Demokratiereport 2007 Internationale Fachkonferenz Steigenberger Grandhotel Petersberg 29. bis 30. Januar 2007, https://www.kas.de/documents/252038/253252/7_dokument_dok_pdf_10104_1.pdf/c374fffa-7edf-4d68-4576-843e87779154?version=1.0&-t=1539664830707, հասանելի՝ 25.06.2020:
4. Parlamentarismus, https://www.lernhelfer.de/schuelerlexikon/politikwirtschaft/artikel/parlamentarismus#, հասանելի՝ 14.05.2020:

ԹԵՄԱ ԵՐԿՐՈՐԴ
ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՏԵՍԱՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

Պառլամենտարիզմի հայեցակարգային հիմքերի ծանոթացումը ցույց է տալիս, որ դրա զարգացման վրա մեծ ազդեցություն են ունեցել ներկայացուցչականության տեսությունը և իշխանությունների տարանջատման ուսմունքը: Ընդ որում, այս գաղափարական հոսանքների զարգացումը հաճախ տեղի է ունեցել համընթաց: Ըստ գերմանացի քաղաքագետ Փ. Հուբերի՝ քաղաքական մտքի պատմության երկու մեծագույն հոսանքների՝ ժողովրդավարության և ներկայացուցչականության տեսությունները միավորվել են և կազմել մեկ ամբողջություն, որը հայտնի է ժողովրդավարական պառլամենտարիզմի տեսություն անվանմամբ:

Ներկայացուցչականության գաղափարը միշտ էլ դրված է եղել իշխելու իրավունքի, տիրապետման հիմքում ինչպես ժողովրդավարության, այնպես էլ միապետության կամ էլ արիստոկրատիայի պայմաններում. միապետության պարագայում մեկ անձն է իրեն համարել հասարակության ներկայացուցիչը, արիստոկրատիայի դեպքում՝ լուսավորյալների խումբը, միջնադարում ներկայացուցչությունը հիմնավորվել է Աստծո կամքի արտահայտման գաղափարով և այլն: Ամենահայտնի բռնապետերն անգամ ձգտել են հենվել հասարակական աջակցության վրա: Ներկայացուցչականության պատմության մեջ շրջադարձային է դրա ներսում խորհրդարանական ուղղությունների առաջացումը: Արևմտաեվրոպական քաղաքակրթության ներքո ներկայացուցչականության խորհրդարանական տիպը զարգացել է հետևյալ գաղափարների վրա.

ներկայացուցչական մարմինը պետք է հենվի ոչ թե մեկ անձի, այլ բազմաթիվ անձանցից բաղկացած ինստիտուտի վրա, ձևավորվի ընտրությունների միջոցով, խորհրդարանականները պետք է կարողանան ազատ բանավիճել միմյանց հետ և կաշկանդված չլինել իրենց որոշումներում: Հենվելով այս գաղափարների վրա՝ Շ. Մարշալը ժամանակակից պառլամենտարիզմի հիմքում դնում է մի շարք բաղադրիչներ:

Պլյուրալիստական ներկայացուցչություն: Պառլամենտարիզմը հիմնված է ոչ միայն լիբերալ ներկայացուցչության և ժողովրդավարության, այլև պլյուրալիզմի գաղափարի վրա, որը ելնում է հասարակության մեջ շահերի բազմազանության գաղափարից: Ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ տարասեռ հասարակություններին առավել լավ կարող են ներկայացնել մեծ թվով անձանց միավորումները, քան անհատը, օրինակ՝ իշխանը կամ էլ թագավորը: Պլյուրալ մարմինը հնարավորություն է տալիս համարժեքորեն արտահայտել հասարակության մեջ առկա բազմազանությունը՝ ներկայացնելով ինչպես մեծամասնության, այնպես էլ փոքրամասնության շահերը: Այս առումով տեղին է հիշատակել Է. Ֆրանկելի միտքը. «Մեկ անձը չի կարող արտահայտել բնակչության տարասեռությունը, քանի որ պլյուրալիզմը և նեոպլյուրալիզմը ենթադրում են, որ հասարակության մեջ առկա են տարբեր լեգիտիմ շահեր»: Պլյուրալիզմը պառլամենտարիզմի առանցքն է համարում նաև Գ. Լայբհոլցը: Ամերիկացի քաղաքագետ Հ. Փիթկինը խորհրդարանական ներկայացուցչության բացատրման 3 մոտեցում է առաջ քաշում՝ ֆորմալիստական, դեսկրիպտիվ և ակտիվ:

Առաջին մոտեցումը վերաբերում է ներկայացուցչության լեգիտիմությանը. ինչո՞ւ որևէ անձ կարող է ներկայացնել մյու-

սին: Դեսկրիպտիվ մոտեցումը ենթադրում է, որ ներկայացուցչական մարմնի կազմը պետք է արտացոլի հասարակական տարասեռությունը: Այս համատեքստում կարևոր դերակատարություն է վերապահված խորհրդարանին: Երրորդ մոտեցումը ներկայացուցչությունը դիտարկում է որպես սոցիալական գործընթաց, որի երկու կողմերում փոխկապվածության մեջ գտնվող շահեր և սպասումներ ունեցող անձիք են:

Ընտրություններ: Պառլամենտարիզմի պայմաններում իշխողներին վերահսկելու, ինչպես նաև ներկայացուցչականության երաշխավորման տեսանկյունից անփոխարինելի նշանակություն ունեն ընտրությունները: Ժողովրդավարական երկրներում խորհրդարանը ժողովրդին ներկայացնող մարմին է՝ ձևավորված ազատ, գաղտնի, հավասար, ուղղակի ընտրությունների արդյունքում: Այն խորհրդարանները, որոնք ձևավորվել են կեղծ ընտրությունների միջոցով, չեն կարող արտահայտել հասարակական տրամադրությունները: Ընտրության հանգամանքը կարևոր է նաև հետադարձ կապի ու պատասխանատվության երաշխավորման տեսանկյունից:

Քննարկում և բանավեճ: Դելիբերատիվ ժողովրդավարության պայմաններում քաղաքական որոշումների կայացման արդյունավետ ուղիներ են քննարկումներն ու փաստարկված բանավեճերը, որոնց անցկացման լավագույն վայր է խորհրդարանը: Քննարկումների հանձնարարականը տրված է որոշումներ ընդունելու լիազորություն ունեցող մարդկանց խմբերին՝ կուսակցություններին: Ինչպես նշում է Յ. Հաբերմասը, հաղորդակցության գործընթացում դերակատարները ձգտում են հասնել իրենց նպատակներին փոխադարձ համաձայնության, փոխհասկացողության միջոցով: Համաձայն նրա՝ երկխոսությունն է հասարակական զարգացման հիմքը:

Ազատ մանդատի գաղափար: Այս հարցի հետ կապված քննարկումները սկիզբ են առել դեռևս Ֆրանսիական հեղափոխության և դրան նախորդած շրջանում: Այդ բանավեճերում Է. Ժ. Սիյեսը, օրինակ, ազատ մանդատի ակնառու կողմնակից էր: Ըստ նրա՝ պատգամավորը պետք է հնարավորություն ունենա իր պարտականություններն իրականացնելու առանց սահմանափակումների և ենթարկվի միայն իր խղճին: Այս դիրքորոշումը բրիտանական խորհրդարանականության մասին իր պատկերացումների հիմքում է դրել նաև Է. Բյորքը: Ներկայացուցչական ազատ մանդատի էությունն այն է, որ պատգամավորները ներկայացնում են ոչ միայն իրենց ընտրողներին, այլ ընդհանրական սուբյեկտ՝ ժողովրդին, ում կամքը գերակա է տեղական ընտրազանգվածի կամքի նկատմամբ:

Պառլամենտարիզմի գաղափարական հիմքերից մեկն էլ իշխանությունների տարանջատման սկզբունքն է: Պառլամենտարիզմի գաղափարական հիմքերից մեկն էլ իշխանությունների տարանջատման սկզբունքն է: Իշխանությունների բաժանման գաղափարի արմատները խորն են և կախված պատմական ժամանակահատվածից ու կառավարման ձևերից տարբեր դրսևորումներ են ունեցել: Առաջին պատկերացումները կարելի է գտնել Արիստոտելի, Էպիկուրիոսի, Պոլիբիուսի աշխատություններում: Ք.ա. 8-րդ դարում Հին Սպարտայում գործում էր իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա հենված իրավաքաղաքական պրակտիկայի նախատիպը: Նման վկայություններ կան նաև Ք.ա. 6-4-րդ դարերի Աքեմենյան կայսրության վերաբերյալ: Հռոմեական հանրապետության սահմանադրության մեջ ամրագրված է իշխանությունների տարանջատման սկզբունքը կոնսուլների, սենատի և ժողովրդական ժողովի (կոմիցիայի) միջև:

Իշխանությունների տարանջատման հայեցակարգը կապվում է 17-րդ դարի անգլիացի լուսավորիչ, դասական ազատականության հայր Ջ. Լոկի անվան հետ: Վերջինս իշխանությունների տարանջատման տեսությանը դոկտրինի տեսք տվեց իր «Պետական կառավարման մասին երկու տրակտատ» աշխատության մեջ: Նրա աչքերի առաջ Անգլիայի քաղաքական համակարգի, խորհրդարանականության զարգացման պատմությունն էր կերտվում: Ըստ Ջ. Լոկի՝ պետությունում բարձրագույն կարող էր համարվել միայն օրենսդիր իշխանությունը:

Իշխանական լիազորությունները ժողովրդական ներկայացուցչության մարմնի՝ խորհրդարանի ձեռքում կենտրոնացնելու մասին գաղափարը զարգացրեց Շ. Մոնտեսքյոն: Նրա մոտեցումները լայնորեն փոխ է առել ժամանակակից պառլամենտարիզմի տեսությունը: Ըստ Շ. Մոնտեսքյոյի՝ միայն իշխանությունների տարանջատումը կարող է ապահովել հասարակության մեջ պլյուրալիստական համաձայնությունը, իրավունքի գերակայությունն ու մարդու և քաղաքացու ազատությունների ապահովումը: Ի տարբերություն Ջ. Լոկի՝ Շ. Մոնտեսքյոն օրենսդիր իշխանությանն առանձնահատուկ տեղ չէր հատկացնում: Նա կարևորում էր իշխանության երեք ճյուղերն էլ: Շ. Մոնտեսքյոն նոր էջ բացեց պառլամենտարիզմի տեսության պատմության մեջ այն առումով, որ կարևորեց պետական իշխանության մարմիններում հասարակության բոլոր շերտերի ու դասերի ներկայացված լինելը, ինչպես նաև դրեց իշխանությունների «հավասարակշռման և զսպման» գաղափարի հիմքերը, որը ժամանակակից պառլամենտարիզմի կարևորագույն բնութագրիչներից է: Ըստ նրա՝ միայն իշխանությունների բաժանումը բավարար չէ, անհրաժեշտ է մշակել

միմյանց գործողությունների վերահսկման սկզբունքներ: Այս հարցում նա հատկապես կարևորում էր դատական իշխանության դերը, քանի որ վերջինս է երաշխավորում հասարակական կարգուկանոնը:

Հետաքրքրական են ֆրանսիական լուսավորության ամենաազդեցիկ ներկայացուցիչներից մեկի՝ Ժան-Ժակ Ռուսոյի գաղափարները: Վերջինս ժողովրդական սուվերենիտետի կողմնակից լինելով՝ անհեթեթ էր համարում իշխանությունների տարանջատումը: Ժան-Ժակ Ռուսոյի ներկայացուցչականության տեսությունը մեկ նախադասությամբ կարելի է բնորոշել այսպես՝ միայն ժողովուրդը կարող է ինքն իրեն ներկայացնել: Լինելով ուղղակի դեմոկրատիայի անվիճելի կողմնակից՝ Ժան-Ժակ Ռուսոն չի մերժում այս կամ այն պետական որոշումը մշակելու համար ընտրության ճանապարհով ժողովրդի կողմից ձևավորված որոշակի մարմնի ստեղծման գաղափարը: Այս է պատճառը, որ վերջինս համարվում է պառլամենտարիզմի տեսության առաջին ազդեցիկ քննադատներից և լայն տարածում գտած ուղիղ ժողովրդավարության գաղափարական կնքահայրերից մեկը:

Դեռևս կենդանության օրոք Ժան-Ժակ Ռուսոյի և Շ. Մոնտեսքյոյի գաղափարները հսկայական ազդեցություն ունեցան ժամանակակիցների վրա՝ դրվելով ֆրանսիական հեղափոխության գաղափարախոսության հիմքում: 1789 թ. ընդունված «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում» ասվում էր. «Հասարակությունը, որտեղ իշխանությունների տարանջատում չկա, չունի Սահմանադրություն»:

Պետական իշխանության բաժանման յուրօրինակ դոկտրին մշակեցին Ամերիկյան հեղափոխության գաղափարախոս հիմնադիր-հայրերը՝ «զսպումների և հակակշիռների» մեխա-

նիզմի ներդրմամբ: Թ. Ջեֆերսոնն առաջ քաշեց օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև լիազորությունների հստակ բաժանման գաղափարը: Ըստ նրա՝ դատական իշխանությանը հատուկ գործառույթներ վերապահելու սկզբունքը կասկած է հարուցում, քանի որ վերջինս չի ընտրվում ժողովրդի կողմից:

«Զսպումների և հակակշիռների» մեխանիզմի մշակման գործում կարևոր ներդրում ունեցավ «Ամերիկյան Սահմանադրության ճարտարապետ», ֆեդերալիստ Ջ. Մեդիսոնը: Նա վստահ էր, որ իշխանության կենտրոնացումը մեկի կամ մի քանի խմբի ձեռքում վաղ թե ուշ հանգեցնում է տիրանիայի, որի դեմ պայքարի միակ միջոցը իշխանության տարանջատումն է: Ի տարբերություն հանրապետականների,որոնք իշխանությունների հավասարակշռությունը պահպանելու նպատակով անհրաժեշտ էին համարում կոնվենտի պարբերական գումարումը, Ջ. Մեդիսոնը առաջարկում է զսպումների և հակակշիռների մեխանիզմի միջոցով ներքին հսկողության գաղափարը: Ըստ նրա՝ գործադիր իշխանությունը պարզ է, իսկ լիազորությունների շրջանակը՝ նեղ: Ավելի քիչ են դատական իշխանության գործառույթները: Տիրապետող է օրենսդիր իշխանությունը, որը ոչ միայն օրենքներ է ընդունում, այլև մուտք ունի դեպի գանձարան: Ուստի հենց նրանից է բխում գլխավոր սպառնալիքը իշխանության այլ ճյուղերին: Հետևաբար պետք է ձգտել չեզոքացնել դրանից բխող վտանգը:

Ի տարբերություն Ջ. Մեդիսոնի՝ Ա. Համիլտոնը պետական իշխանության հիմնական կրող է համարում գործադիր իշխանությանը: Ըստ նրա՝ ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդիր իշխանության ուզուրպացումը հանգեցնում է տիրանիայի:

Այսպիսով, իշխանության ճյուղերի հավասարակշռության պահպանումը պառլամենտարիզմի հիմնական սկզբունքներից է, ինչը ենթադրում է, որ դրանք պետք է գործեն ինքնուրույն և միմյանցից կախված լինեն այնպես, որ ոչ մեկը չգերիշխի մյուսի նկատմամբ: Իշխանության բաշխումը մի քանի պետական մարմինների միջև էականորեն նվազեցնում է դրա ուզուրպացման և միանձնյա տնօրինման ռիսկերը, հնարավորություններ ստեղծում ամենաթողության ու անօրինականության բացառման համար: Միայն այս դեպքում է հնարավոր երաշխավորել «իշխանությունը պատկանում է ժողովրդին» սկզբունքի գործառնումը: Զսպումների և հակակշիռների իրական երաշխավորվածության պարագայում, ինչպես նշում է Ի. Կանտը, իշխանությունների տարանջատումը ոչ թե պետք է հանգեցնի իշխանության ճյուղերի փոխգործակցության բացառմանը, այլ փոխլրացմանը, քանի որ դրանց գործունեության ողջ նպատակը հանրային բարօրության երաշխավորումն է:

Ժամանակակից պետություններում առավել ճիշտ է խոսել ոչ թե իշխանությունների տարանջատման, այլ գործառույթների սահմանազատման մասին, որտեղ խորհրդարանի՝ որպես ներկայացուցչական մարմնի դերակատարությունը առանձնահատուկ է: Ի տարբերություն կառավարության անդամների, որոնք նշանակվում են, խորհրդարանականները ընտրվում են: Խորհրդարանի ուժը ողջ ժողովրդի կամ էլ նրա զգալի մասի կողմից պարբերաբար ընտրված պատգամավորների միջոցով վերահսկողական գործառույթով օժտված լինելն է: Օրենսդիր մարմնի խնդիրը կառավարմանը հետևելն ու վերահսկելն է:

Իշխանության օրենսդիր ճյուղի կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ վերջինս է սահմանում խաղի կանոնները: Ինչպես նաև օրենքների մշակումից զատ հետևում է դրանց իրագործմանը: Օրենսդիրն է ընդունում կարևորագույն տնտեսական փաստաթուղթը՝ պետական բյուջեն: Իր ողջ գործունեությունը գործադիր իշխանությունը իրականացնում է բացառապես օրենքի շրջանակներում: Այս պատճառով է, որ այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք ընդունում է վերջինս, կոչվում են ենթաօրենսդրական:

Ժողովրդավարական երկրներում իշխանության երեք ճյուղերի փոխգործակցությունը երաշխավորող ցանկացած պետական մարմին կոչված է արդյունավետորեն իրականացնել իր գործառույթները՝ նպատակ ունենալով հասնել հասարակական բարիքի՝ հաշվի առնելով ազգային շահերը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Բացահայտել ներկայացուցչականության տեսության՝ որպես պառլամենտարիզմի տեսահայեցակարգային հիմքի էությունը:
2. Ներկայացնել դելիբերատիվ ժողովրդավարության պայմաններում քաղաքական որոշումների կայացման ուղիները:
3. Վերլուծել իշխանությունների տարանջատման՝ Ջ. Լոկի դոկտրինը:
4. Ներկայացնել իշխանությունների տարանջատման՝ Շ. Մոնտեսքիոյի և Ժան-Ժակ Ռուսոյի գաղափարների տարբերությունները:
5. Ուսումնասիրել զսպումների և հակակշիռների տեսությունը ամերիկյան ֆեդերալիստների տեսություններում:
6. Վեր հանել ժամանակակից պառլամենտարիզմի գաղափարական հիմքերը:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Զսպումների և հակակշիռների տեսությունը ամերիկյան ֆեդերալիստների տեսություններում:
2. Իշխանությունների տարանջատման՝ Ջ. Լոկի դոկտրինը:
3. Իշխանությունների տարանջատման՝ Շ. Մոնտեսքիոյի և Ժան-Ժակ Ռուսոյի գաղափարների տարբերությունները:
4. Ժամանակակից աշխարհում պառլամենտարիզմի տրանսֆորմացման և տարածման միտումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Քեռյան Գ.,** Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Եր., 2002, 290 էջ:
2. **Օրդուխանյան Է.,** Քաղաքական խոսույթ. ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., 2016, 110 էջ:
3. **Гранкин И. В.,** Парламент России, https://www.studmed.ru/view/-grankin-iv-parlament-rossii_34751dc8bad.html, հասանելի՝ 20.02.2018:
4. **Дайси А.,** Основы государственново права Англии. М., 1905, 681 с.
5. **Даль Р.,** Демократия и ее критики, М., “Российская политическая энциклопедия” (РОССПЭН), 2003, 564 с.
6. **Даль Р.,** Полиархия, плюрализм и пространство, https://www.gumer.info/bibliotek_Buks/Polit/dal/pol_pl.php, հասանելի՝ 15.07.2020:
7. **Данилов А.,** Трансформация постсоветского общества: контуры нового мира, https://bazhum.muzhp.pl/media/files/Doctrina_Studia_-spoleczno_polityczne/Doctrina_Studia_spoleczno_polityczne-r2005-t2/Doctrina_Studia_spoleczno_polityczne-r2005-t2-s167-219/-Doctrina_Studia_spoleczno_polityczne-r2005-t2-s167-219.pdf, հասանելի՝ 15.04.2020:
8. **Дюверже М.,** Политические партии, М., 2002, 558 с.

9. **Карнишина Н.,** История политических и правовых учений: методические указания http://window.edu.ru/catalog/pdf2txt/912/-36912/13925?p_page=5, հասանելի՝ 06.09.2020:
10. **Кара-Мурза С. Г.,** Советская цивилизация (том I) http://www.kara-murza.ru/books/sc_a/sc_a_content.htm, հասանելի՝ 12.02.2018:
11. **Локк Дж.,** Сочинения в 3-х томах, http://philosophy.ru/library/-sochineniya-v-3-kh-tomakh-t-3-filosofskoe-nasledie-t-103/, հասանելի՝ 12.01.2020:
12. **Маркс К.,** Избранные произведения. т. 2. М., 1962, 576 с.

Գիտական հոդվածներ

1. **Ազատյան Խ.,** Պառլամենտարիզմի տեսահայեցակարգային հիմքերի ձևավորումն ու զարգացումը, Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես, 2020, 6 (11), էջ 118-130:
2. **Մովսիսյան Ա.,** Աշխարհաժողով. Հին Հայաստանի բարձրագույն խորհրդակցական ժողովը՝ երկրի դասային համերաշխության երաշխավոր, «21-րդ ԴԱՐ», թիվ 3 (13), 2006թ., էջ 164-171:
3. **Վաղարշյան Ա.,** Հայաստանի անկախության հռչակագիրը և ժողովրդավարական, իրավական հասարակության ռազմավարության օրենսդրական կենսագործումը 1990-1991 թթ., http://www.ysu.am/files/01A_Vagharshyan-1450343348-.pdf, հասանելի՝ 25.03.2018:
4. **Քալաշյան Ա.,** Հայաստանի առաջին Հանրապետության լեգիտիմ խորհրդարանը և նրա առանձնահատկությունները, http://kantegh.asj-oa.am/677/1/210-221.pdf, հասանելի՝ 15.02.2021:
5. **Քեռյան Գ.,** Հայաստանի Հանրապետության կուսակցությունները և արտաքին քաղաքականությունը, «Բանբեր Երևանի համալսարանի, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն», 2 (119), Եր., 2006 թ., էջ 3-11:
6. **Ачкасов А.,** Международный контекст процессов демократизации в посткоммунистических странах Центральной и Восточной

Европы: общее и особенное, Вестник Санкт-Петербургского университета, 2012, с. 65-72.
7. **Болпонова А.,** Политические кланы Кыргызстана: история и современность, https://cyberleninka.ru/article/n/politicheskie-klany-kyrgyzstana-istoriya-i-sovremennost, հասանելի՝ 14.08.2020:
8. **Борисовская Н. В.,** Современный российский парламентаризм: эволюция взглядов и тенденции развития // "Известия Российского государственного педагогического университета им. А. И. Герцена", 2008, № 70, с. 78-84.

Համացանցային աղբյուրներ

1. Parlamentarismus, https://www.lernhelfer.de/schuelerlexikon/politikwirtschaft/artikel/parlamentarismus#, հասանելի՝ 14.05.2020:
2. Parlamentarismus: Ursprung, Merkmale, Arten, Vorteile, Nachteile, https://de.solbrillersalg.com/9269-parliamentarism-origin-characteristics-types-advantages-disadvantages, հասանելի՝ 22.09.2020:

ԹԵՄԱ ԵՐՐՈՐԴ
«ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքական մտքի պատմության ողջ ընթացքում տեսաբանների հետազոտությունների գլխավոր նպատակը եղել է կառավարման արդյունավետ ձևի, պետական կարգի լավագույն մոդելի հայտնաբերումը, ինչը թույլ կտար ներդաշնակեցնել մասնավորի և ընդհանուրի շահերը, ապահովել քաղաքացիների մասնակցությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացին, նպաստել քաղաքական համակարգի կայուն գործառմանն ու շարունակական զարգացմանը: Հասարակական զարգացման տարբեր փուլերում կառավարման լավ կամ վատ ձևերի վերաբերյալ տեսակետները տարբեր են: Սակայն պատմական փորձը ցույց է տալիս, որ կառավարումը կարող է արդյունավետ համարվել միայն այն դեպքում, երբ այն կրողների իշխանությունը սահմանափակված է և վերահսկելի: Պատմականորեն գործադիր իշխանությունն օժտված է եղել հսկայական իրավասություններով: Այս առումով անչափ կարևոր է խորհրդարանի՝ որպես գործադիր իշխանության իրավասությունների շրջանակը սահմանափակող կարևորագույն կենտրոնի դերը: Ընդ որում, այդ անհրաժեշտությունը ճանաչվել է դեռևս վաղուց:

Այսօր արդեն՝ ժողովրդավարացման երրորդ ալիքի պայմաններում, փաստ է, որ կառավարման ներկայացուցչական ձևը ամենատարածվածն է աշխարհում, ինչը վկայում է դրա համապարփակ բնույթի մասին: Ներկայումս կառավարման ներկայացուցչական համակարգը, չնայած իր բոլոր թերություններին, ժողովրդավարության կարևորագույն բնութա-

գրիչներից է: Սա է պատճառը, որ խորհրդարանի և պառլամենտարիզմի տեսության նկատմամբ մասնագիտական, գիտագործնական հետաքրքրությունն ավելի ու ավելի է աճում՝ քաղաքական գիտության հրամայականներից մեկը դարձնելով այդ հիմնահարցերի խորը ուսումնասիրությունը:

Պառլամենտարիզմը սոցիալ-քաղաքական և իրավաքաղաքական բարդ, բազմաչափ ֆենոմեն է: Այդ է պատճառը, որ այն ինչպես քաղաքագետների, այնպես էլ իրավագետների, պատմաբանների, սոցիոլոգների հետազոտման տիրույթում է: Շնորհիվ իր երկակի՝ իրավաքաղաքական բնույթի և բազմաշերտ բովանդակային կառուցվածքի՝ պառլամենտարիզմի էության վերաբերյալ գոյություն ունեն տարաբնույթ կարծիքներ:

Պառլամենտարիզմի մասին դատողություններ անելիս, առավել ևս սահմանելիս պետք է նկատի ունենալ, որ այն պատմական երևույթ է և յուրաքանչյուր փուլում տարբեր դրսևորումներ է ունեցել: Բացի դրանից՝ եզրույթի սահմանման ժամանակ որոշ շփոթությունների պատճառ կարող է դառնալ այն, որ «պառլամենտարիզմ» հասկացության արմատը խորհրդարանն է: Գիտական վիճահարույց հարց է՝ արդյո՞ք գոյություն ունի պառլամենտարիզմ առանց խորհրդարանի: Այս առնչությամբ Յ. Փաթցելթը խորհրդարանի 2 տիպ է առանձնացնում՝ լայն և նեղ առումներով: Առաջինի տակ Յ. Փաթցելթը հասկանում է քաղաքական ներկայացուցչական մարմնի ցանկացած խորհրդակցություն, որը հրավիրվում է կառավարողների կողմից և որի ընթացքում քննարկվում են հասարակական նշանակության հարցեր: Այս առումով, ըստ նրա, կարևոր չէ, թե ինչ անվանում ունի ինստիտուտը: Էական չէ նաև՝ երբ է այն ձևավորվել և որոնք են դրա իրավասությունները: Որոշիչն այստեղ ներկայացուցչականության և

միջնորդավորվածության գաղափարներն են: Այսինքն՝ ներկայացուցիչները պետք է գործեն ներկայացվողի շահերին համապատասխան:

Նեղ իմաստով խորհրդարան ասելով՝ Յ. Փաթցելթը հասկանում է ժողովրդավարական ճանապարհով ձևավորված ներկայացուցչական մարմին: Եթե լայն իմաստով ներկայացուցչական մարմիններ, որոնք մենք պայմանականորեն ենք խորհրդարան որակում, գոյություն են ունեցել դեռևս անտիկ շրջանում, ապա նեղ իմաստով խորհրդարանը նոր ժամանակներին հատուկ ֆենոմեն է: Լայն առումով խորհրդարաններ գոյություն ունեն նաև ներկայումս ոչ ժողովրդավարական երկրներում:

Ժամանակի ընթացքում պառլամենտարիզմն «անկախացել» է և նոր նշանակություններ է ձեռք բերել: Եղել են ժամանակներ, երբ այն բացասական ընկալում է ունեցել և կիրառվել է թագավորական իշխանության կողմնակիցների կողմից խորհրդարանների տարածումը բնութագրելու համար:

Ինչպես արդեն նշեցինք, պառլամենտարիզմը լայնորեն հետազոտվում է իրավագիտական հարացույցի շրջանակներում: Դրա այս կամ այն կողմին անդրադարձել են իրավունքի այնպիսի հայտնի տեսաբաններ, ինչպիսիք են Ն. Ա. Բոգդանովան, Պ. Ա. Աստաֆիչևը, Գ. Յելլինեկը, Հ. Մեյերը և այլք: Սակայն պետք է նշել, որ իրավագիտական գրականության մեջ ևս չկա դրա բնույթի վերաբերյալ միասնական տեսակետ: Այստեղ պառլամենտարիզմը հիմնականում դիտարկվում է որպես պետական կառավարման ձև, որի գոյությունն ու զարգացումը կապվում են հասարակության մեջ առկա այնպիսի ինստիտուցիոնալ բաղադրիչների հետ, ինչպիսիք են խորհրդարանը, իշխանությունների տարանջատման սկզբունքը,

զսպումների և հակակշիռների համակարգը, կուսակցական համակարգը և այլն: Այսինքն՝ պառլամենտարիզմը դիտարկվում է քաղաքական ինստիտուտների իրավական գործունեության պրիզմայով:

Ինչպես տեսնում ենք, իրավագետները ևս «պառլամենտարիզմ» երևույթը պարզաբանելիս չեն կարողանում այն դիտարկել քաղաքականությունից դուրս: Պառլամենտարիզմի իրավագիտական սահմանման ժամանակ մենք բախվում ենք «պառլամենտարիզմ», «կառավարման ձև» և «խորհրդարանական կառավարման ձև» հասկացությունների պարզաբանման և հստակեցման խնդրին: Այս հասկացությունների փոխհարաբերակցությունը նման է ընդհանուրի և մասնավորի հարաբերակցությանը: «Պառլամենտարիզմ» հասկացությունը բովանդակային առումով ավելի լայն է և ներառում է ինչպես «կառավարման ձև», այնպես էլ «խորհրդարանական կառավարման ձև» հասկացությունները: Բանն այն է, որ պառլամենտարիզմը հավասարապես կարող է գոյություն ունենալ ինչպես միապետության, այնպես էլ հանրապետության պայմաններում, ուստի այն միայն խորհրդարանական կառավարման ձևի հետ նույնացնելը ճիշտ չէ: Այն ժողովրդական ներկայացուցչության ձև է, որի հիմքում ընկած է համամարդկային, համաժողովրդական արժեքների համակարգը, ինչը կոչված է ապահովելու բնակչության անուղղակի մասնակցությունը պետական կյանքի կարևորագույն որոշումների կայացմանը:

Այսօր քաղաքագիտական գրականության մեջ պառլամենտարիզմի երկու հիմնական ընկալում է առանձնացվում՝ լայն և նեղ: Լայն իմաստով պառլամենտարիզմը դիտվում է որպես տեսություն քաղաքական յուրաքանչյուր համակարգի մասին, որում կենտրոնական դիրք է գրավում խորհրդարանը:

Նեղ իմաստով այն շատ հաճախ նույնացվում և կապվում է ժողովրդավարության հետ: Նման մոտեցման կողմնակիցներ են նաև ավստրիացի իրավագետ Հ. Քելզենը և ռուս իրավագետ Ե. Խուբները: Ըստ առաջինի՝ ժողովրդավարության գաղափարը կարող է իրականություն դառնալ միայն պառլամենտարիզմի պայմաններում: Երկրորդի համաձայն՝ պառլամենտարիզմի մասին կարելի է խոսել միայն դեմոկրատական կառավարման համատեքստում:

Գերմանացի հետազոտող Պ. Լյոշեն ևս պառլամենտարիզմը ներկայացնում է երկու տեսանկյունից՝ լայն և նեղ: Առաջինի դեպքում այն կապվում է խորհրդարանական պառլամենտարիզմի հետ, որի հիմքում ընկած են որոշակի ինստիտուտներ, հասարակական կառույցներ և քաղաքական մշակույթ: Նեղ սահմանմամբ պառլամենտարիզմ նշանակում է խորհրդարանի՝ որպես ժողովրդի շահերը արտահայտող կառույցի առկայություն:

Վերլուծելով քաղաքագիտական գրականության մեջ պառլամենտարիզմի վերաբերյալ առկա հիմնական մոտեցումները՝ կարելի է առանձնացնել ծայրահեղական երկու դիրքորոշում:

Առաջին խմբի ներկայացուցիչները բացարձակացնում են խորհրդարանի դերը, գերարժևորում դրա ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա: Այս մոտեցման համաձայն՝ այնտեղ, որտեղ կա խորհրդարան, կա նաև պառլամենտարիզմ և հակառակը՝ չկա պառլամենտարիզմ առանց խորհրդարանի: Ժամանակակից քաղաքական համակարգերում խորհրդարանի դերի կարևորության գնահատման այս մոտեցման համաձայն՝ պառլամենտարիզմը սահմանվում է բացառապես որպես բոլոր մնացած քաղաքական ինստի-

տուտների նկատմամբ խորհրդարանի գերակայություն: Պ. Շլյախտունը պառլամենտարիզմը սահմանում է որպես քաղաքացիական հասարակության և պետության փոխազդեցության ձև, որը հիմնված է խորհրդարանի՝ օրենսդիր ներկայացուցչական մարմնի առաջնակարգ դերը ճանաչելու վրա: Ռ. Մ. Ռոմանովը գտնում է, որ պառլամենտարիզմը ծագում և գործում է այնտեղ, որտեղ խորհրդարանն օժտված է օրենքներ ընդունելու, կառավարություն ձևավորելու, վերջինիս և գործադիր իշխանության այլ մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասություններով:

Փաստորեն մեթոդաբանական այս մոտեցման շրջանակներում պառլամենտարիզմը սահմանվում է որպես տեսական հայեցակարգ, որը զբաղվում է օրենսդիր իշխանության ուղղակի հետազոտմամբ: Ըստ այսմ՝ պառլամենտարիզմը հանդես է գալիս որպես ժողովրդի կողմից խորհրդարանի միջոցով իշխանության իրականացման գաղափարների և փորձի ամբողջություն: Ինչպես նշում է Օ. Ն. Բուլակովը, պառլամենտարիզմը տեսագաղափարական հայեցակարգ է, որը ծառայում է խորհրդարանի և դրա գործառույթների անհրաժեշտության գիտական հիմնավորմանը:

Կարծում ենք, որ նման մոտեցումը փոքր-ինչ թերի է և միակողմանի, քանի որ այն անտեսում է պառլամենտարիզմի սոցիալ-մշակութաբանական կողմը և համալիր բնույթը: Ասել, որ որևէ երկրում խորհրդարանի առկայությունը նշանակում է նաև այնտեղ պառլամենտարիզմի առկայություն, ճիշտ չէ, քանի որ պառլամենտարիզմն ավելի լայն ֆենոմեն է, քան զուտ տեսություն խորհրդարանի և խորհրդարանական կառավարման ձևի մասին: Ինստիտուցիոնալ բաղադրիչների գոյությու-

նը դեռևս չի ենթադրում տվյալ պետությունում և հասարակությունում պառլամենտարիզմի առկայություն: Այս առումով տեղին է բերել Բ. Ն. Չիչերինի սահմանումը, ըստ որի՝ խորհրդարանական կառավարումը ժողովրդի քաղաքական հասունության ճանաչումն է:

Հետազոտողների երկրորդ խումբը վստահ է, որ պառլամենտարիզմի պայմաններում խորհրդարանը իշխանության մնացած մարմիններին համահավասար իրավասությունների է տիրապետում, քանի որ վերջինիս վերահսկողական լիազորությունների շնորհիվ է գործառնում ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր մարմինը: Այսպես, օրինակ, գերմանացի հետազոտող Գ. Յելլինեկը թեպետ խորհրդարանը դիտում է որպես պառլամենտարիզմի միջուկ, սակայն այն չի դասում պետության կարևորագույն մարմինների թվին: Խորհրդարանը, ըստ նրա, այնպիսի երկրորդային մարմին է, որի ծագումը, գոյությունն ու անհետացումը չեն կարող արմատական ազդեցություն ունենալ պետության բնականոն գործառնության վրա: Հ. Հակոբյանը գտնում է. «Պառլամենտարիզմը լոկ ներկայացուցչական մարմնի՝ պառլամենտի առկայությունը կամ օրինաստեղծ աշխատանքի տեխնոլոգիան չէ»: Ի. Վ. Գրանկինը նշում է, որ պառլամենտարիզմը պետական իշխանության մարմինների ձևավորման և կազմակերպման համակարգ է, որը հիմնված է իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքի վրա, ինչը երաշխավորում է իշխանության առանձին ճյուղերի անկախությունն ու ինքնուրույնությունը:

Առավել նպատակահարմար է շեշտը դնել «պառլամենտարիզմ» ֆենոմենի համալիր բնույթի վրա՝ այն դիտարկելով գործող քաղաքական համակարգի ամբողջության լույսի ներ-

քո, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների փոխկապվածության և փոխկախվածության համատեքստում:

Այս դեպքում, փաստորեն, պառլամենտարիզմը պետական իշխանության իրականացման մեթոդ է, որը երաշխավորում է իշխանության ճյուղերի իրական փոխզիջում և հակակշռում: Այս դիրքորոշման կրող է նաև սահմանադրական իրավունքի ռուս մասնագետ, ակադեմիկոս Օ. Ե. Կուտաֆինը:

Ինքնատիպ մոտեցում է առաջ քաշում ամերիկացի հետազոտող Ա. Ջենինգսը. նա նշում է, որ խորհրդարանի գործառույթը ոչ թե կառավարելն է, այլ քննադատելը: Այդ քննադատությունը ոչ միայն պետք է ուղղված լինի կառավարության քաղաքականության էական փոփոխմանը, այլև պիտի նպատակ հետապնդի ձևավորելու հասարակական կարծիք: Խորհրդարանի գլխավոր գործառույթն այն է, որ այնտեղ հնչած ճառերը արձագանք գտնեն երկրում: Ըստ էության, Ջենինգսը այս սահմանմամբ ցույց է տալիս խորհրդարանի կախվածությունը հասարակական կարծիքից: Նմանատիպ սահմանում է տալիս նաև Ս. Կարա-Մուրզան, համաձայն որի՝ խորհրդարանը ուղեղների համազգային ցուցահանդես է, քաղաքական փեսացուների տոնավաճառ, որի նպատակը քմահաճ հարսնացուի՝ ընտրելու իրավունք ունեցող հանրության բարեհաճությանը արժանանալն է: Փաստորեն Ս. Կարա-Մուրզան մի կողմից ցույց է տալիս խորհրդարանի՝ հասարակության առջև պատասխանատու լինելու հանգամանքը, մյուս կողմից՝ ժողովրդի՝ քաղաքական գործընթացների վրա ազդեցություն ունենալու վճռորոշ դերը:

Ուսումնասիրելով պառլամենտարիզմի ժամանակակից սահմանումները՝ պարզ է դառնում, որ համաձայն դրանց մեծ մասի՝ այն նույնականացնում է խորհրդարանական կա-

ռավարման ձևի հետ և այնպիսի համակարգային կատեգորիա է, ինչպես օրինակ՝ պրեզիդենտիալիզմը: Այսպես, 20-րդ դարի սահմանադրական իրավունքի կարկառուն ներկայացուցիչ, գերմանացի փիլիսոփա և քաղաքագետ Կ. Լյովենշթայնը նեղ իմաստով պառլամենտարիզմը նույնականացնում է խորհրդարանական ժողովրդավարությանը և որակում այն որպես «մաքուր, իրական պառլամենտարիզմ»: Շ. Փֆլոքը պառլամենտարիզմ եզրույթը կիրառում է խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրները բնութագրելու համար, որտեղ գործում է «կառավարությունը պատասխանատու է խորհրդարանի առջև» սկզբունքը:

Այսպիսով, ուսումնասիրելով իրավագիտական և քաղաքագիտական գրականության մեջ պառլամենտարիզմի տեսության վերաբերյալ առկա հիմնական մոտեցումները, կարող ենք եզրակացնել.

- պառլամենտարիզմը տեսություն է, որի հետազոտման առանցքում խորհրդարանի և օրենսդիր իշխանության ուսումնասիրումն է իշխանությունների տարանջատման սկզբունքի, սոցիալական տարբեր շերտերի և խմբերի շահերի պաշտպանվածության, քաղաքական բազմակարծության, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխավորված պաշտպանության պայմաններում, այն սոցիոմշակութային ֆենոմեն է, որը ներառում է տվյալ ժողովրդի քաղաքական մշակույթը, իրավագիտակցության աստիճանը,
- ցանկացած երկրում պառլամենտարիզմի զարգացման վրա հսկայական ազդեցություն են գործում տվյալ պետությանը հատուկ քաղաքական վարչակարգի յուրա-

հատկությունները, հասարակության սոցիալ-պատմական զարգացածության աստիճանը,

- պառլամենտարիզմի գոյությունը պայմանավորված է ոչ այնքան պետական իշխանության մարմինների շարքում խորհրդարանի տեղի իրավանորմատիվային ամրագրմամբ, որքան հասարակության քաղաքական գիտակցության զարգացման աստիճանով,
- պառլամենտարիզմի գոյության կարևորագույն նախապայմաններն են իշխանությունների տարանջատման սկզբունքի, բազմակուսակցականության և բազմակարծության առկայությունը, պետական մարմինների ձևավորումն ազատ ընտրական համակարգի միջոցով. իրական պառլամենտարիզմ կարող է լինել միայն ազատ ընտրություններով ձևավորված, ժողովրդի կամքն արտահայտող ներկայացուցչական մարմնի գոյության պայմաններում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Ուսումնասիրել գրականության մեջ պառլամենտարիզմի վերաբերյալ առկա սահմանումները, վերհանել դրանցում առկա հիմնական տարբերությունները:
2. Ուսումնասիրել պառլամենտարիզմի միասնական սահմանման շուրջ գիտական հանրույթի կողմից կատարված փորձերը և վերհանել դրա անհաջողության պատճառները:
3. Ուսումնասիրել պառլամենտարիզմի հետազոտման առանձնահատկությունները իրավագիտական հարացույցի շրջանակներում:
4. Վերլուծելով քաղաքագիտական գրականության մեջ պառլամենտարիզմի վերաբերյալ առկա հիմնական մոտեցումները՝ առանձնացնել և խմբավորել հիմնական դիրքորոշումները:

5. Համեմատական վերլուծությամբ ներկայացնել պառլամենտարիզմի ժամանակակից սահմանումները:
6. Առաջարկել պառլամենտարիզմի բացատրման սեփական սահմանումը:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Պառլամենտարիզմի սահմանումները, դրանցում առկա հիմնական տարբերությունները:
2. Պառլամենտարիզմի հետազոտման առանձնահատկությունները իրավագիտական հարացույցի շրջանակներում:
3. Պառլամենտարիզմի տարածման հիմնական պատճառներն ու միտումները Եվրոպայում:
4. Պառլամենտարիզմի ժամանակակից սահմանումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Милль Ст.,** Размышления о представительном правлении, Chalidze publications, 1988.
2. **Монтескье Ш.,** О духе законов, https://www.civisbook.ru/files/File/-Monteskye_O%20dukhe.pdf, հասանելի՝ 12.02.2018:
3. **Нерсесянц В.,** История политических и правовых учений, М., 2014, 944 с.
4. **Платон,** Государство. Соч. Том 3, ч. 2. М., 1972, 572 с.
5. **Платон,** Собрание сочинений, т. 4, М., 1994, 830 с.
6. **Романов Р. М.,** Парламентаризм: теория, история и современность. М., 2002, 295 с.
7. **Руссо Ж.-Ж.,** Об общественном договоре, или принципы политического права, https://www.civisbook.ru/files/File/Russo_O_-dogovore.pdf, հասանելի՝ 15.08.2020:
8. **Руссо Ж. Ж.,** Об общественном договоре. Трактаты. М.: "Канон-пресс Кучково поле", 1998, 413 с.
9. **Титов С. А.,** История парламентаризма в России. М., 2015, 111 с.

10. **Фукуяма Ф.,** Конец истории и последний человек, http://lib.ru/POLITOLOG/FUKUYAMA/konec_istorii.txt, հասանելի՝ 10.08.2019:
11. **Хабермас Ю.,** Демократия. Разум, Нравственность, М., 1995, 252 с.
12. **Хайбуллин М.,** Парламентаризм в условиях политического транзита: опыт стран Центральной и Восточной Европы, https://www.dissercat.com/content/parlamentarizm-v-usloviyakh-politicheskogo-tranzita-opyt-stran-tsentralnoi-i-vostochnoi-evro, հասանելի՝ 12.01.2020:
13. **Хантингтон С.,** Третья волна, Демократизация в конце XX века, М., 2003, 368 с.
14. **Чичерин Б. Н.,** О народном представительстве, М., 1899, 838 с.
15. **Шляхтун П. П.,** Парламентаризм. Киев, 2003, 151 с.
16. **Штокмар В.,** История Англии в Средние века, СПб., 2000, 203 с.
17. **Alemann von U.,** Parteiensysteme im Parlamentarismus. Eine Einführung und Kritik von Parlamentarismus, Bertelsmann Universitätsverlag, 1973, 421 S.
18. **Beyme K.,** Der Gesetzgeber. Der Bundestag als Entscheidungszentrum, Opladen, 1997, 432 S.
19. **Beyme von K.,** Die parlamentarische Demokratie. Entstehung und Funktionsweise 1789-1999, Springer-Verlag, 2013, 445 S.
20. **Bosl K.,** Der moderne Parlamentarismus und seine Grundlagen in der ständischen Repräsentation, Berlin, 1975, 545 S.
21. **Busch E.,** Parlamentarische Kontrolle, Heidelberg, 1991, 182 S.
22. **Freise M.,** Externe Demokratieförderung in postsozialistischen Transformationsstaaten, https://books.google.am/books?id=p8Zd0vNhjNcC&pg=PA70&lpg=PA70&dq=Parlamentarismus+in+Transformationsstaaten&source=bl&ots=nKCSXJsWdM&sig=ACfU3U0arjyV5e3SvBxoE5vDkW8txFzd_A&hl=ru&sa=X&ved=2ahUKEwiniK2fq4_wAhXIwosKHe1bCzYQ6AEwEnoECAUQAw#v=onepage&q=Parlamentarismus%20in%20Transformationsstaaten&f=false, հասանելի՝ 25.03.2018:

Գիտական հոդվածներ

1. **Ազատյան Խ.**, «Պառլամենտարիզմ» հասկացության ըմբռնման շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի. միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, 2018, № 2 (26), էջ 72-81:
2. **Геннадиевна К.,** Роль Президента Украины в политических процессах, file:///C:/Users/Hovo/Downloads/32-31-1-PB.pdf, հասանելի՝ 08.09.2020:
3. **Геннадевна Л.,** Соотношение парламентаризма с принципом демократической государственности: Вопросы конституционно-правовой теории, https://cyberleninka.ru/article/n/sootnoshenie-parlamentarizma-s-printsipom-demokraticheskoy-gosudarstvennosti-voprosy-konstitutsionno-pravovoy-teorii, հասանելի՝ 10.08.2019:
4. **Горылев А. И.,** Правовая природа современного парламентаризма // "Вестник Нижегородского государственного университета им. Н. И. Лобачевского". Выпуск 1 (5): 2002, с. 102-110.
5. **Дворцова Т.,** Политическая трансформация как составная часть политического процесса, https://superinf.ru/view_helpstud.php?id=2448, հասանելի՝ 15.04.2020:
6. **Енгоян А.,** Идеологические ориентиры стран Евразийского союза, http://www.ysu.am/files/02A_Engoyan_r.pdf, հասանելի՝ 14.06.2018:
7. **Енгоян А.**, Идеологические парадигмы переходного периода в Армении, Вестник ЕГУ, Международные отношения, Политология, 2013, 14 (1.6), с. 35-41.
8. **Златанов Б.,** Особенности модернизации на постсоциалистическом пространстве, Московский гуманитарный университет, 2015, №1, с. 70-77.

Համացանցային աղբյուրներ

1. Гаэтано Моска: Жизнь и труды, https://lib.sale/uchebnik-teoriya-istoriya-gosudarstva/gaetano-moska-80166.html, հասանելի՝ 30.08.2019:
2. Parlamentarismus vs. Post-Parlamentarismus- Eine Idealtyp orientierte Vorortung der Europäischen Union, https://www.grin.com/-document/56552, հասանելի՝ 06.08.2020:

ԹԵՄԱ ՉՈՐՐՈՐԴ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Պառլամենտարիզմի և ժողովրդավարության փոխհարաբերակցության հիմնախնդրի շուրջ քաղաքագիտական հանրության հետաքրքրությունը վերջին շրջանում կտրուկ աճել է: Քաղաքական կյանքի կազմակերպման նշված հայեցակարգերը մինչ օրս շարունակում են վայելել միջազգային հանրության, նախևառաջ արևմտյան քաղաքակրթության աջակցությունը: Չնայած սրան՝ ներքոթվարկյալ հարցադրումների վերաբերյալ քննարկումները չեն դադարում. Ի՞նչ է ժողովրդավարությանը սպասվում ապագայում, կփոխվեն արդյո՞ք քաղաքական մասնակցության և ներկայացուցչության մեխանիզմները, կշարունակի՞ պառլամենտարիզմը նոր հազարամյակում խաղալ իր այդքան կարևոր դերակատարությունը Արևմուտքի երկրների քաղաքական գործընթացներում: Այնպիսի հանրաճանաչ քաղաքական տեսաբաններ, ինչպիսիք են օրինակ՝ Ֆ. Ֆուկույաման և Ս. Հանթինգթոնը, գտնում են, որ ժողովրդավարությունը 21-րդ դարում ոչ միայն չի զիջի իր դիրքերը, այլև կգնա ընդլայնման ուղիով: Հետազոտողների մեկ այլ խումբ, այդ թվում հանրահայտ ֆուտուրոլոգ Է. Թոֆֆլերը, հակառակ մոտեցումն է առաջ քաշում, ըստ որի՝ ժողովրդավարությունը չի պահպանի իր նախկին տեսքը և սոցիալ-քաղաքական նոր իրողություններով պայմանավորված կենթարկվի շոշափելի փոփոխությունների: Այս տեսակետը կիսում է նաև ամերիկացի հրապարակախոս Ֆ. Զաքարիան, որը գտնում է, որ ժամանակակից աշխարհում միշտ չէ, որ ժո-

ղովրդավարությունը լիբերալ է, և շատերը մոլորության մեջ են, երբ հավասարության նշան են դնում «ժողովրդավարություն» և «լիբերալիզմ» հասկացությունների միջև:

Ծանոթանալով երկու մոտեցումներին էլ՝ համոզվում ենք, որ ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ տեսակետի կողմնակիցները համակարծիք են մեկ խնդրի շուրջ՝ ժողովրդավարությունը 21-րդ դարում փոխակերպումների է ենթարկվելու: Կարծում ենք այդ խնդիրների հաղթահարման գործում, ինչպես պատմական մյուս ժամանակահատվածներում, առանցքային դերակատարություն կարող է իրականացնել պառլամենտարիզմը:

Ասվածի համատեքստում վերոնշյալ խնդիրների հաղթահարման հրամայականներով թելադրված անհրաժեշտություն է առաջանում հստակ պարզաբանում մտցնել «պառլամենտարիզմ» և «ժողովրդավարություն» հասկացությունների միջև, բացահայտել դրանց կապն ու փոխգործակցության ձևերը: Հասարակության ժողովրդավարացման գործում ինստիտուցիոնալ բաղադրիչների և դրանց արդյունավետության գնահատման վերաբերյալ հետազոտությունները փաստում են, որ պատմական զարգացման տարբեր փուլերում պառլամենտարիզմի և խորհրդարանի ունեցած դերակատարությունը հսկայական է եղել:

Ժամանակակից պառլամենտարիզմի տեսության հիմքերը դրվել են բուրժուական հասարակարգի և դրան զուգակցող լիբերալիզմի քաղաքական տեսության վերելքի պայմաններում, երբ խորհրդարանը սահմանվեց որպես բուրժուական հասարակարգի ներկայացուցչական մարմին: Փաստորեն, խորհրդարանական ներկայացուցչության սկզբունքը ժամանակակից խորհրդարանը առանձնացրեց վաղ միջնադարի ժո-

ղովներից: Այսպիսով, մինչև 20-րդ դարի սկզբները պառլամենտարիզմի և ժողովրդավարության զարգացումը տեղի էր ունենում սերտ կապվածության պայմաններում: Նշված սոցիալ-քաղաքական երևույթները հաճախ միևնույն հարթության վրա էին դրվում, երբեմն էլ կիրառվում էին որպես հոմանիշներ:

Առաջիններից մեկը, ով հստակորեն տարանջատեց «պառլամենտարիզմ» և «ժողովրդավարություն» հասկացությունները, գերմանացի փիլիսոփա Կ. Շմիտտն էր: Նա, ընդգծելով պառլամենտարիզմի՝ որպես հոգևոր և քաղաքական ֆենոմենի բնութագրիչներն ու պատմական բնույթը, նշում էր, որ լիբերալ, անհատականության վրա հիմնված պառլամենտարիզմը նույնական չէ ժողովրդավարության հետ: «Մեր օրերում, երբ և՛ ժողովրդավարությունը, և՛ պառլամենտարիզմը հաղթանակել են, դրանց հակադրությունը դարձել է ակնհայտ, իսկ լիբերալ պառլամենտարիզմի և զանգվածային ժողովրդավարության գաղափարների միջև առկա տարբերություններն այլևս անհնար է չնկատել: Այսօր պառլամենտարիզմը վերածվել է կառավարման մեթոդի և քաղաքական համակարգի: Ներկայումս խորհրդարանը հենված է բոլորովին այլ հիմքերի վրա, քան մի քանի դար առաջ, իսկ այն վճռորոշ դերակատարությունը, որը վերջինս կատարում էր նախկինում, սպառել է իրեն» (այսօր ասելով՝ Կ. Շմիտտը նկատի ուներ 20-րդ դարի սկիզբը-Խ. Ա.):

Գոյություն ունի, այսպես կոչված, «նպատակների հետերոգոնիա», երբ գործնականում տեսությունները կամ փոփոխվում են՝ կորցնելով սկզբնական կարևորությունը, կամ ավելի են նշանավորվում: Փոխվում են նաև տեսությունների կյանքի կոչման միջոցները, սակայն «սկզբունքների հետերոգոնիա»

տեղի չի ունենում: Հղում կատարելով սրան՝ Կ. Շմիտտը նշում էր, որ պառլամենտարիզմի հիմնարար սկզբունքները չեն փոխվել, սակայն դրանց կիրառումը սկսել է նոր նպատակներ հետապնդել: Ի տարբերություն գերմանացի լիբերալներ Մ. Վեբերի, Հ. Պրեյսի, Ֆ. Նաումանի, որոնք պայքարում էին կառավարման կայսերական համակարգի դեմ և պառլամենտարիզմի մեջ տեսնում քաղաքական լավագույն առաջնորդների հավաքագրման և քաղաքական դիլետանտիզմի վերացման հուսալի միջոցի՝ Կ. Շմիտտը ցավով արձանագրում է, որ պառլամենտարիզմի նշված արժանիքները կերպափոխվել են: Ըստ նրա՝ շատ պետություններում պառլամենտարիզմը հանգեցրել է այն բանին, որ հանրային նշանակության բոլոր հարցերը վերածվել են կուսակցությունների և նրանց հետևորդների միջև տեղի ունեցող փոխզիջումների և շահույթի ձեռքբերման մեխանիզմի, իսկ քաղաքականությունն այլևս էլիտայի գործը չէ, այլ վերածվել է մարդկանց անմիտ դասի առուծախի առարկայի: Այսպիսով, պառլամենտարիզմի սկզբնական հիմքերի նենգափոխումը կապվում էր զանգվածային ժողովրդավարության առաջընթացի հետ:

Կ. Շմիտտը, որպես ժողովրդավարության և պառլամենտարիզմի հակասության մեկ այլ պատճառ, մատնանշում էր քննարկումների բնույթի փոփոխումը: Ըստ նրա՝ խորհրդարանական բոլոր կառուցակարգերն ու նորմերը իմաստ են ստանում քննարկումների և հրապարակայնության շնորհիվ: Խորհրդարանը «ճշմարիտ» է մինչև այն պահը, երբ տեղի է ունենում իրական հանրային քննարկում: Հարկ է նկատել, որ «քննարկում» հասկացությունը Կ. Շմիտտի համար առանձնահատուկ նշանակություն ուներ և չէր ենթադրում սոսկ բանակցությունների անցկացում: «Նա, ով ձեռքբերված ամեն մի պայ-

մանավորվածություն ու համաձայնություն պառլամենտարիզմ է կոչում, գտնվում է սխալ ճանապարհի վրա, քանի որ բանակցություններ վարվել են անգամ բացարձակ միապետերի միջև»: Քննարկումը ենթադրում է կարծիքների փոխանակություն, որի գլխավոր նպատակը բանական փաստարկների հիման վրա սեփական տեսակետի իրավացիությունը ապացուցելը կամ էլ դիմացինին հնարավորություն տալն է, որպեսզի նա ներկայացնի ճշմարտության սեփական ընկալումը: Կ. Շմիտտը, վկայակոչելով Ֆ. Գենտցին, որը լիբերալ Է. Բյորքի հետևորդներից էր, հստակ սահմանում էր տալիս. ներկայացուցչական կառավարման ցանկացած համակարգի համար բնութագրական է այն, որ օրենքները ոչ թե շահերի պայքարի, այլ կարծիքների բախման արդյունք հանդիսանան: Ապա, որպես իրական քննարկման անհրաժեշտ պայմաններ, կարևորում էր կուսակցական պարտավորություններից անկախությունը և, ինչը դժվար էր նրա համար պատկերացնելը, անձնական շահը մի կողմ դնելը: Ըստ նրա՝ յուրաքանչյուր պատգամավոր ոչ թե որևէ առանձին կուսակցության, այլ ողջ ժողովրդի ներկայացուցիչը պետք է լինի:

Կ. Շմիտտն իր օրերի պառլամենտարիզմի դրությունը ծայրահեղ էր որակում, քանի որ, ըստ նրա, ժամանակակից զանգվածային ժողովրդավարության զարգացումը փաստարկված քննարկումը դարձրել է ձևական: Այդ պատճառով էլ ժամանակակից խորհրդարանական իրավունքի շատ նորմեր, առաջին հերթին, պատգամավորների անկախության և նիստերի հրապարակայնության սկզբունքները, ֆորմալ բնույթ են կրում: Կուսակցություններն այլևս չեն հակադրվում գաղափարական քննարկումներով, այլ հանդես են գալիս որպես սոցիալական կամ տնտեսական ուժային խմբեր, որոնց նպատա-

կը կոալիցիաներ կազմավորելը և փոխզիջումների գնալն է: Զանգվածները նվաճվում են քարոզչական ապարատի կողմից: Փաստարկը, որը հատուկ է իրական քննարկմանը, բառի բուն իմաստով վերացել է: Կուսակցությունների միջև բանակցություններում դրան փոխարինել են շահերի և ուժային հնարավորությունների սառը հաշվարկը, իսկ մասսաների հետ շփումներում արդյունավետ ներշնչումն ու խորհրդանիշը: Հետագայում «քննարկման» կարևորությանն իր տեսության մեջ կենտրոնական տեղ հատկացրեց գերմանական քաղաքական մտքի մեկ այլ դասական ևս՝ Յու. Հաբերմասը, որը նշում էր. «Ժողովրդավար օրենսդիրը հրապարակում է իր օրենքները նկատի ունենալով միայն մեծամասնությանը, սակայն մեծամասնության որոշումը կարող է ընդունվել միայն այն դեպքում, երբ դրա բովանդակությունը ձևավորվել է քննարկման արդյունքում»:

Արևմտյան ժամանակակից քաղաքագետ, գերմանացի իրավաբան Փ. Բադուրան ևս իր «Պառլամենտարիզմ և կուսակցապետական ժողովրդավարություն» աշխատության մեջ մասնակցային ժողովրդավարության վերելքի պայմաններում կասկածի տակ է դնում պառլամենտարիզմի հիմքերը: Նա գտնում է, որ նախկինում խորհրդարանը, պառլամենտարիզմն ու խորհրդարանական կառավարման ձևը բնորոշվում էին այնպիսի ինստիտուտների և գաղափարների առկայությամբ, որոնց պայմաններում արդար պայքար էր ընթանում ճշմարիտ ժողովրդավարության համար, ուստի պատահական չէ, որ բուրժուական հեղափոխական հասարակության արմատական ծրագրերի մեծ մասը վերաբերում էր խորհրդարանին և պառլամենտարիզմին: Սակայն համընդհանուր ընտրական իրավունքը, ինչպես նաև մեծ չափերի հասնող պետական

խնդիրները, մեկ բնորոշմամբ՝ «հասարակության ազգայնացումը» (Verstaatlichung der Gesellschaft) և «պետության սոցիալականացումը» (Vergesellschaftung des Staates) և, վերջապես, զանգվածների անմիջական ինքնակառավարման կոչերով աչքի ընկնող ժողովրդավարական նոր արմատական շարժումները կասկածի տակ են դնում պառլամենտարիզմի հիմքերը: Մյուս կողմից մասնակցային ժողովրդավարությունը զրկում է լեգիտիմությունից համընդհանուր բարեկեցության պետության կերտմանն ուղղված տեխնոկրատական կառավարության գոյությունը:

Մեր համոզմամբ Կ. Շմիտտի քննադատական տեսությունը բավականին արժեքավոր է և նոր էջ է բացում պառլամենտարիզմի տեսության զարգացման պատմության մեջ, սակայն նրա ոչ բոլոր տեսակետների հետ կարելի է համաձայնել: Նախևառաջ, վերջինիս մոտեցումը պառլամենտարիզմի դերակատարության ավարտի վերաբերյալ հոռետեսական է: Ըստ էության Կ. Շմիտտը դեմ չլինելով պառլամենտարիզմին՝ կտրուկ եզրահանգում է անում, երբ նշում է, որ այս ինստիտուտը կատարել է իր պատմական առաքելությունը և պետք է հեռանա պատմության թատերաբեմից: Բացի դրանից՝ Կ. Շմիտտը ոչ այնքան պառլամենտարիզմի, որքան զանգվածային ժողովրդավարության քննադատ է: Մարդկության զարգացման ընթացքում փոփոխության են ենթարկվում ինչպես ինստիտուտները, այնպես էլ՝ գաղափարները: Պառլամենտարզիմը ևս բացառություն չէ: Ինչ խոսք, ներկայիս փուլում, երբ հասարակական հարաբերությունների զարգացման հետևանքով հսկայական տեղաշարժեր են տեղի ունեցել, պառլամենտարիզմը հնարավոր չէ համեմատել իր դասական ձևերի հետ, իսկ այն դերակատարությունը, որը վերջինս կատա-

րում էր նախկինում, չի կարող նույնությամբ կրկնվել, սակայն ներկայումս՝ կապված ժողովրդավարության զարգացման հետ, այն նոր իմաստ և բովանդակություն է ձեռք բերել:

Պատմական այդ իրադարձությունները էական փոփոխություններ մտցրին նախագահի ինստիտուտի զարգացման մեջ և նոր շունչ հաղորդեցին խորհրդարանին: Անցումային պետություններում խորհրդարանի դերի մեծացման գործոնը բացահայտում է պառլամենտարիզմի և ժողովրդավարության հարաբերակցության մեկ կայուն օրինաչափություն. որքան ժողովրդավարությունն ավելի է զարգանում և կատարելագործվում, այնքան նոր մարտահրավերների է բախվում պառլամենտարիզմը և դրա բովանդակության հարստացման պահանջ է առաջ գալիս: Նշված մարտահրավերները, երբեմն, հանգեցնում են պառլամենտարիզմի դիրքերի որոշակի թուլացմանը: Ռուս քաղաքագետ Ա. Քերիմովը այս գործընթացը կապում է մի քանի օբյեկտիվ հանգամանքների հետ:

Նախևառաջ, պառլամենտարիզմի հիմնական գործառույթներից մեկը՝ օրենսդրությունը (օրինաստեղծությունը), վերածվել է մասնագիտության: Օրենքների ստեղծման համար այլևս ոչ թե հասարակական տրիբունաներ են պահանջվում, այլ համապատասխան գիտելիքներով և փորձառությամբ օժտված մասնագետներ, որոնց կախվածությունն ընտրողներից գնալով նվազում է:

Բացի դրանից՝ ներկայումս գրեթե բոլոր զարգացած երկրներում խորհրդարանական գործընթացները լիովին վերահսկվում են կուսակցությունների կողմից, ինչն էապես մեծացնում է վերջիններիս կարևորությունն ու հեղինակությունը: Կուսակցական համագումարներն ու ժողովները, երբեմն,

ավելի շատ են գտնվում լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում, քան խորհրդարանական ինստիտուտները:

Հարկ է նկատել, որ նշված խնդրի շուրջ ևս գիտական հանրույթում միակարծություն չկա: Օրինակ՝ Ս. Միլլը պառլամենտարիզմի բնութագրիչների թվում ներկայացուցչականությանը առանձնահատուկ կարևորություն էր տալիս՝ նշելով. «Ներկայացուցչական մարմինը պետք է լինի հարթակ, որը կարտահայտի ոչ միայն ողջ ազգի, այլև դրա առանձին հատվածների, իսկ հնարավորության սահմաններում նաև բոլոր նշանավոր գործիչների տեսակետները»: Ժամանակակից որոշ փորձագետներ էլ գտնում են, որ շահերի ներկայացման գործառույթը խոչընդոտում է բեղմնավոր օրենսդրական գործունեության իրականացմանը: Վերջիններս իրենց տեսակետը հիմնավորում են մարդկանց՝ քաղաքական գիտելիքների պակասով:

Պառլամենտարիզմի համար խնդիրներ են ստեղծում նաև էտատիզմի ավանդույթները, համաձայն որի՝ մարդիկ ցանկանում են իշխանության ղեկին տեսնել ուժեղ անհատականության, որը ունակ է խիստ կարգուկանոն հաստատելու և ժողովրդի մասին հոգ տանելու:

Համաշխարհայնացման գործընթացներով պայմանավորված՝ ազգային խորհրդարանների հեղինակության որոշակի անկում է նկատվում, քանի որ քաղաքականության մշակման և կառավարման վրա ներկայումս հսկայական ազդեցություն են գործում վերպետական կառույցները՝ միջազգային կազմակերպություններն ու անդրազգային կորպորացիաները, որոնք զգալիորեն սահմանափակում են խորհրդարանի լիազորությունները, հատկապես արտաքին քաղաքականության հար-

ցերում: Համաշխարհայնացման պայմաններում նման ներգործություններից խուսափելը հետզհետե բարդանում է:

Զարգացած երկրներում ժամանակակից պառլամենտարիզմի վիճակի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել դրա դիրքերի խարխլմանն ուղղված մեկ գործոն ևս. պառլամենտարիզմի և գործադիր իշխանության միջև հարաբերություններում նկատվում է գործադիր իշխանության լիազորությունների աճի միտում: Գործադիր իշխանությունը գործնականում, երբեմն, իր լիակատար վերահսկողությունն է հաստատում խորհրդարանական գործունեության նկատմամբ: Ժողովրդավարության և պառլամենտարիզմի շուրջ հնչող, երբեմն, կոշտ քննադատությունները կարելի է կապել այն հանգամանքի հետ, որ ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հասկացության վերաբերյալ միանշանակ սահմանում գոյություն չունի:

Հաջորդ հարցը հետևյալն է՝ ինչպիսին պետք է լինի ներկայացուցչական և ուղղակի ժողովրդավարության հարաբերակցությունը: Ժան-Ժակ Ռուսոն բացառում էր ներկայացուցչական ժողովրդավարության ինստիտուտների գոյությունը, քանի որ, ըստ նրա, ժողովրդական սուվերենիտետը մասնատման ենթակա չէ: Ժամանակակից պետությունների համար ժողովրդավարության կատարելագործման ռազմավարությունների թվում ուղղակի ժողովրդավարական կառավարումը առաջնակարգ դիրք չի զբաղեցնում: Ավելին, գերիշխող է այն տեսակետը, որ իրական ժողովրդավարությունն այն չէ, որի պայմաններում բոլորը զբաղվում են քաղաքականությամբ՝ համարելով այն իրենց գործը, այլ որի պայմաններում մարդիկ, զբաղվելով իրենց անմիջական գործով, քաղաքականությամբ զբաղվելու հնարավորությունը պատվիրակում են

իրենց կողմից ազատ կամարտահայտման պայմաններում ընտրված ներկայացուցիչներին: Պառլամենտարիզմը հնարավորություն է տալիս ներկայացուցչական կառույցին չկորցնել կապը բնակչության հետ և գործառնել «բաց» քաղաքական համակարգի շրջանակներում՝ զուգահեռաբար պահպանելով ուղղակի ժողովրդավարության արժանիքները՝ երաշխավորելով իշխանության լեգիտիմությունը, զարգացնելով հասարակության քաղաքական ակտիվությունը, նպաստելով անձի ինքնահիրացմանը, ապահովելով քաղաքական ինստիտուտների նկատմամբ վերահսկողությունը: Այսպիսով, պառլամենտարիզմը կատարում է ուղղակի ժողովրդավարության սկզբունքների պահպանման գործառույթ:

Հաջորդ հարցը վերաբերում է պատգամավոր-ընտրողներ հարաբերությունների խնդրին: Պարզ է, որ ներկայացուցչական ժողովրդավարությունը ժողովրդի իշխանության իրականացումն է վերջիններիս կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով: Տևական ժամանակ խորհրդարանը դիտարկվում էր որպես ժողովրդի հայելի: Ուստի տեսականորեն ենթադրվում էր, որ խորհրդարանում տեղի ունեցող քննարկումները համազգային քննարկման դրսևորումներն են: Սակայն աշխարհի խորհրդարանների մեծամասնության գործունեությունը ցույց է տալիս, որ պատգամավորական կորպուսի կազմը էականորեն տարբերվում է բնակչության սոցիալական կազմից: Այստեղից էլ բխում է խորհրդարանական ներկայացուցչության վիճելի հարցերից մեկը. պատգամավորները ժողովրդի, թե իշխանության կամքն են արտահայտում: Ժան-Ժակ Ռուսոն գտնում էր, որ ժողովրդական ինքնիշխանությունը չի կարող տրվել որևէ պատգամավորի: Մյուս կողմից «իշխանություն» և «կամք» հասկացությունները տարբեր իմաստ-

ներ ունեն: Մի կողմից կարելի է համաձայնել այն մտքի հետ, որ խորհրդարանը պետք է կայացնի որոշումներ՝ ելնելով հասարակական շահերից և հասարակական կարծիքից, մյուս կողմից չի կարելի հաշվի չառնել այն հանգամանքը, որ հասարակության պահանջմունքները և հասարակական կարծիքը փոփոխական են և կարող են չհամընկնել հասարակության օբյեկտիվ պահանջմունքների հետ: Մեկ այլ՝ հոռետեսական մոտեցման համաձայն՝ ներկայացուցչական կառավարման նպատակն այն չէ, որպեսզի «մեծն արդարությունը» հաղթանակի, այլ որպեսզի մարդիկ, ենթարկվելով հիմար կառավարմանը, իրավունք չունենան բողոքել դրանից:

Չնայած մատնանշված խնդիրների առկայությանը՝ խորհրդարանը շարունակում է մնալ միակ կառույցը, որը ներկայացնում է հասարակությունն իր ողջ բազմազանությամբ:

Կարծում ենք՝ ներկայացուցչական ժողովրդավարությունը իր բոլոր թերություններով հանդերձ հանրությանը կայուն երաշխիքներ է տալիս զերծ մնալ իշխանությունների կամայականություններից, հասարակության մեջ հանդուրժողականության մթնոլորտ և փոխզիջումների գնալու հնարավորություններ է ստեղծում: Այս իմաստով այն փաստացիորեն նույնականացվում է ժողովրդավարական արժեքների հետ: Ուստի իրական պառլամենտարիզմ հնարավոր է միայն ժողովրդավարության պայմաններում, որտեղ խորհրդարանը՝ պառլամենտարիզմի կարևորագույն բաղադրատարրը, դառնում է այն վայրը, որտեղ տեղի է ունենում դեմոկրատիայի տեսության և պրակտիկայի միաձուլում: Ժողովրդավարությունը ժողովրդի կամքը արտահայտող վարչակարգ է, խորհրդարանը՝ ժողովրդի կամքն արտահայտող մարմին: Պառլամենտարիզմը ծագում և գոյություն է ունենում այն ժամանակ, երբ խորհրդարանն

օժտվում է օրինաստեղծ լիազորություններով, կառավարության ձևավորման և վերջինիս նկատմամբ վերահսկողություն իրականացնելու մեխանիզմներով:

Այսպիսով, հաշվի առնելով վերևում քննարկված հարցերը, պարզ է դառնում, որ պառլամենտարիզմը պատմական երևույթ է, սակայն կարծրացած համակարգ չէ, այլ ունակ է զարգանալու, փոխելու իր ինստիտուցիոնալացման ձևերը: Այն բաց համակարգ է, ինչը հնարավորություն է տալիս վերջինիս պատշաճ կերպով արձագանքելու ժամանակի մարտահրավերներին: Պառլամենտարիզմը ժողովրդավարության զարգացման, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների հարգման, քաղաքացիական հասարակության զարգացվածության բարձր մակարդակի նշան է: Պառլամենտարիզմի տեսությունը ունակ է կոնկրետ ուղղություններ մատնանշել ներկայացուցչական կառույցների կատարելագործման համար: Այն ունի հսկայական կառուցողական ներուժ, որը հասարակության զարգացման համար էվոլյուցիոն ուղի ապահովելու կարողության մեջ է, ինչի վկայությունը բազմիցս կարելի է տեսնել պատմության էջերում: Կարծում ենք՝ ժողովրդական ներկայացուցչությունը փոխարինելու, իշխանությունը գործադիր թևի ձեռքում կենտրոնացնելու փորձերը հետքայլ են: Հետևաբար պառլամենտարիզմի զարգացման դժվարությունները հաղթահարելու համար անհրաժեշտ է այս ինստիտուտի բարեփոխմանն ուղղված միջոցառումների հետևողական իրականացում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Ուսումնասիրել պառլամենտարիզմի և ժողովրդավարության հարաբերակցության հիմնախնդիրը:
2. Համեմատական վերլուծությամբ ներկայացնել ժողովրդավարության ապագային սպասվող հեռանկարները:
3. Վերլուծել «պառլամենտարիզմ» և «ժողովրդավարություն» հասկացությունների տարանջատման առանձնահատկությունները Կ. Շմիտտի տեսության մեջ:
4. Ներկայացնել պառլամենտարիզմի և ժողովրդավարության հակասությունները Փ. Բադուրայի «Պառլամենտարիզմ և կուսակցապետական ժողովրդավարություն» աշխատության մեջ:
5. Պառլամենտարիզմի դիրքերի թուլացման օբյեկտիվ հանգամանքները ժամանակակից պայմաններում:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Պառլամենտարիզմի և ժողովրդավարության հարաբերակցության հիմնախնդրի միտումները ժամանակակից աշխարհում:
2. ժողովրդավարության ապագային սպասվող հեռանկարները:
3. Պառլամենտարիզմի և ժողովրդավարության հակասությունները Փ. Բադուրայի «Պառլամենտարիզմ և կուսակցապետական ժողովրդավարություն» աշխատության մեջ:
4. «Պառլամենտարիզմ» և «ժողովրդավարություն» հասկացությունները Կ. Շմիտտի տեսության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Habermas J.,** Theorie des kommunikativen Handelns, Frankfurt am Main, 1981, 545 S.

2. **Hartmann J.,** Pluralismus und Parlamentarismus in Theorie und Praxis, Westdeutscher Verlag, 1992, 421 S.
3. **Jellinek G.,** System der subjektiven öffentlichen Rechte, Akademische Verlagsbuchhandlung von J.C.B. Mohr (Paul Siebeck) Freiburg, 1892, 402 S.
4. **Kelsen H.,** Verteidigung der Demokratie: Abhandlungen zur Demokratietheorie, ausgewält und herausgegeben von Matthias Jestaedt und Oliver Lepsius, Mohr Siebeck Tübingen, 2006, 402 S.
5. **Leibholz G.,** Das Wesen der Repräsentation und der Gestaltwandel der Demokratie im 20. Jahrhundert, Berlin, 1960, 279 S.
6. **Marschall St.,** Parlamentarismus: Eine Einführung, Nomos Verlagsgesellschaft, Baden-Baden, 2016, 265 S.
7. **Meyer H.,** Die Stellung der Parlamente in der Verfassungsordnung des Grundgesetzes // H.-P. Schneider, W. Zeh (Hrsg.), Parlamentsrecht und Parlamentspraxis in der Bundesrepublik Deutschland, Berlin, New York 1989, 129 S.

Գիտական հոդվածներ

1. **Ազատյան Խ.,** Պառլամենտարիզմի և ժողովրդավարության հարաբերակցության հիմնախնդիրը, Բանբեր Երևանի համալսարանի. միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, 2020, № 1 (31), էջ 48-60:
2. **Золов В., Волчкова О.,** Полупрезиденциализм в Центрально-Восточной Европе (сводный реферат), https://cyberleninka.ru/article/n/poluprezidentsializm-v-tsentralno-vostochnoy-evrope-svodnyy-referat, հասանելի՝ 10.10.2019:
3. **Искандарян А.,** Армения между автократией и полиархией, https://carnegieendowment.org/files/ProetContra_52_19-28.pdf, հասանելի՝ 15.07.2020
4. **Маркаров А.,** Институциональная трансформация в Армении в 1990-2010 гг., http://www.ysu.am/files/05A_Markarov.pdf, հասանելի՝ 15.04.2019:

5. **Меньшиков П., Юсупова Е.,** Парламентский дискурс и современная медийная политика: эволюция в исторической ретроспективе, http://intcom-mgimo.ru/2019-12/parliamentary-discourse, հասանելի՝ 15.10.2020:
6. **Керимов А.,** Современный парламентаризм: особенности и проблемы развития, https://cyberleninka.ru/article/n/sovremennyy-parlamentarizm-osobennosti-i-problemy-razvitiya, հասանելի՝ 10.08.2019:
7. **Костаки Г., Мишин С.,** Парламентаризм в Республике Молдова: Условия и особенности становления, https://ibn.idsi.md/sites/-default/files/imag_file/Parlamentarizm%20v%20RM_uslovia%20i%-20osobennosti%20stanovlenia.pdf, հասանելի՝ 14.08.2020:
8. **Пономарева Е.,** Политические системы стран Центральной и Восточной Европы, Московский государственный институт международных отношений, 2014, №2, с. 18-26.

Համացանցային աղբյուրներ

1. Представительная демократия и парламентские учреждения в современном мире: состояние и тенденции, http://duma.gov.ru/media/files/fFeAlYFCA4BcXWRAVDIn8AvWRfy6zDPk.pdf, հասանելի՝ 10.08.2019:
3. Доклад «О роли оппозиции в демократическом парламенте», https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)025-rus, հասանելի՝ 25.03.2021:
4. Жизнь после истории, Интервью корреспондента журнала «World Link» с Фрэнсисом Фукуямой, http://www.politnauka.org/library/-dem/fukuyama-interview.php, հասանելի՝ 10.08.2019:
5. Gewaltenteilung: parlamentarische Demokratie, https://www.lernhelfer.de/schuelerlexikon/politikwirtschaft/artikel/gewaltenteilung-parlamentarische-demokratie, հասանելի՝ 15.10.2020:

ԹԵՄԱ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախ կարևոր է հասկանալ, թե ինչ է «փոխակերպում» հասկացությունն առհասարակ: Քաղաքագիտական գրականության մեջ նշված երևույթը տարբեր մեկնաբանություններ և բացատրություններ ունի: Համաձայն Հ. Վագեների՝ այն հասարակական փոփոխության յուրօրինակ ձև է, կարգի վերափոխում քաղաքական, տնտեսական, մշակութային կամ էլ այլ ոլորտներում: «Փոխակերպվող հասարակություն» ասելով՝ նախևառաջ պետք է հասկանալ հասարակության այնպիսի վիճակը, որի պայմաններում արմատականորեն փոխվում են վերջինիս հիմնական խնդիրներն ու գործառույթները, ինչն, իր հերթին, որակական փոփոխություններ է մտցնում հասարակության արժեհամակարգում: Փոխակերպումը որոշակի չափով անցումային քաղաքական գործընթացների արդյունք է՝ մի շարք խմբերի պայքար հանուն կամ էլ ընդդեմ ժողովրդավարության: Միևնույն ժամանակ քաղաքական փոխակերպման գործընթացի արդյունքում է որ, որպես կանոն, քաղաքական անցում, իսկ ապա քաղաքական զարգացում է արձանագրվում: Հին, նախկին համակարգի կազմաքանդումից մինչև նոր համակարգի հաստատումը գիտական գրականության մեջ բնութագրվում է այլ եզրույթներով ևս՝ անցում, հետփոխակերպում և այլն: Կառուցվածքային փոփոխությունները և դրանց արդյունքում առաջացած փոխակերպման գործընթացներն ըմբռնելու և բացատրելու համար 1990-ական թթ. սկզբին քաղաքական տեսության մեջ սկսեց գործածվել նաև «համակարգային փոխակերպում» հասկացությունը, որի բնու-

թագրիչներն էին անորոշությունն ու անկանխատեսելիությունը»: Քաղաքագիտական գրականության մեջ հստակ առանձնացվում են «քաղաքական փոփոխություն» և «քաղաքական փոխակերպում» հասկացությունները: Առաջինի դեպքում համակարգը փոխվում է ներսից աստիճանական քայլերի իրականացման միջոցով, երկրորդը ենթադրում է մի կարգից հիմնովին այլ կարգի անցում: Այս մոտեցման շրջանակներում համակարգի փոփոխությունը պետք է ուղեկցվի որակական, թռիչքաձև իրադարձություններով, որպեսզի փոխակերպում բնորոշվի: Մեկ այլ սահմանման համաձայն՝ քաղաքական համակարգի փոխակերպումը դրա տեսքի, ձևի, էական հատկանիշների փոփոխությունն է, որի արդյունքում համակարգը, պահպանելով իր նախկին որոշ գծերը, ձեռք է բերում նոր հատկություններ:

Գիտական գրականության մեջ տարածված մոտեցում է 1985 թ. ԽՍՀՄ-ում սկիզբ առած գործընթացները դիտարկել որպես հեղափոխություն: Այս տեսանկյունից կարևոր է հասկանալ «փոխակերպում», «բարեփոխում» և «հեղափոխություն» հասկացությունների տարբերությունները: Բարեփոխումները որպես փոխակերպում դիտարկելը ճիշտ չէ, քանի որ տվյալ պարագայում գործ չունենք հին կարգից նոր կարգի անցման իրավիճակի հետ: Բարեփոխումների պարագայում խոսքը գործող հիմնարար կարգի պահպանման պայմաններում մասնակի փոփոխությունների իրականացման մասին է: Մարքսիզմի հետևորդ ռուս տեսաբանները «փոխակերպում» և «հեղափոխություն» հասկացությունները նույնականացնում էին: Ըստ նրանց՝ Խորհրդային Միությունում մեկնարկած գործընթացները, անկասկած, հեղափոխական էին, որոնց առանցքում քաղաքական, իրավական, տնտեսական և սոցիալական

կարգի փոխակերպումն էր: Հարկ է նշել, որ «փոխակերպում» և «հեղափոխություն» հասկացությունները չպետք է նույնացնել. առաջինը լայն հասկացություն է, երկրորդը՝ նեղ: Հեղափոխությունները փոխակերպման յուրօրինակ ձևեր են: Փոխակերպման ցանկացած գործընթաց անցնում է հետևյալ՝ ազատականացման, կայունության և ինստիտուցիոնալացման փուլերով: Այն համալիր գործընթաց է և զուտ կոնստրուկտիվ փոփոխությունների շարք չէ, այլ հասարակական կյանքի բոլոր բնագավառները ներառող նպատակային, հասցեական քաղաքական որոշումների կայացման արդյունք:

Քաղաքական փոխակերպման գործընթացը կապված է քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական հասարակության կայացվածության, էլիտաների և կոնտր էլիտաների վարքի, քաղաքական փոփոխությունների, քաղաքական զարգացման և այլնի հետ: Այդ գործընթացի արդյունքում ենթադրվում են հետևյալ փոփոխությունները՝ ի հայտ են գալիս նոր գաղափարներ գեներացնող քաղաքական նոր դերակատարներ, իրականացվում են սահմանադրական փոփոխություններ, փոփոխվում է օրենսդրությունը, պետական կառավարման ձևը, քաղաքական ուժերի դասավորվածությունը, հնարավոր է կուսակցական մի համակարգից մյուսին անցում, ի հայտ են գալիս քաղաքական դերակատարների փոխհարաբերությունների նոր ձևեր, քաղաքացիական հասարակության և իշխանության փոխհարաբերությունները նոր հիմքերի վրա են դրվում, քաղաքական վարչակարգը ենթարկվում է փոփոխությունների, փոփոխություն է նկատվում քաղաքական էլիտայի և ընտրազանգվածի վարքում:

Քաղաքական փոխակերպման գործընթացներում կարևոր դեր ունեն քաղաքական լիդերները: Վերջիններիս որդեգրած

ռազմավարությունից ու մարտավարությունից, պատասխանատվությունից ու հեռատեսությունից, համախմբվելու, երկրի վիճակը խորապես գնահատելու ունակությունից է կախված փոխակերպման ելքը. այն կհանգեցնի կայունության, բարգավաճման և հանրային համերաշխության, թե՞ նոր ճգնաժամերի:

Փոխակերպման օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը հասկանալու համար անհրաժեշտություն է առաջանում այն դիտարկել քաղաքական գործընթացի համատեքստում: Քաղաքագիտական գրականության մեջ այլ տիպաբանությունների կողքին քաղաքական գործընթացի երկու տիպ է առանձնացվում՝ կայուն և փոխակերպվող: Կայուն քաղաքական գործընթացը բնութագրվում է քաղաքական համախմբվածությամբ և քաղաքացիների կայուն վարքով, ինչպես նաև քաղաքական որոշումների կայացման պատրաստի մեխանիզմներով: Այս գործընթացին հատուկ է կառավարման արդյունավետությունը, ինչպես նաև հասարակության անդամների՝ իրավական նորմերին հետևելու պատասխանատվության բարձր զգացումը: Փոխակերպվող քաղաքական գործընթացը սովորաբար ծագում է իշխանական ճգնաժամի և սոցիալական բախումների պայմաններում: Վարչախմբի կողմից ստեղծված իրավիճակին համարժեք ձևով արձագանքելու անկարողությունն առաջացնում է քաղաքական գործընթացի անկայունություն:

Փոխակերպմանը հաջորդում է հետփոխակերպման գործընթացը, որի ժամանակ երկրի առջև ծառացած խնդիրներն ավելի կանխատեսելի են դառնում, իսկ դրանց լուծման գործընթացը՝ ավելի հեշտ: Մյուս կողմից անցումային փուլում առաջացած պատրանքներն ու սին հույսերը վերանում են:

1990-ական թթ. սկզբներին հետխորհրդային փոխակերպվող երկրների քաղաքագիտական խոսույթի կենտրոնում, ԶԼՄ-ներում, քաղաքական գործիչների ելույթներում առկա իրավիճակը բնութագրելու համար նոր՝ «վնասվածք», եզրույթն էր շրջանառվում: «Վնասվածքներն» ուղեկցում էին փոխակերպվող հասարակություններին բնորոշ ցնցող իրադարձություններին: Հետխորհրդային բոլոր երկրներում փոխակերպման գործընթացը կապվում էր անսպասելիության հետ: Ապաարդյունաբերականացման և զանգվածային գործազրկության հետևանքները փոխակերպման «շոկի» պատճառներից մեկն էին: Բացի դրանից՝ փոխակերպվող երկրների քաղաքական ինստիտուտներին բնորոշ անկայունությունը պայմանավորված էր նոր սոցիալ-քաղաքական միջավայրում գործառնելու փորձի բացակայությամբ: Մեծագույն խնդիրներից էր հասարակության սոցիալականացումը նոր իրավիճակում և հարմարեցումը առաջացած փոփոխություններին: Սրա հետ մեկտեղ, ճգնաժամային իրավիճակներում մեծանում էր կառավարման ձախողման, ինչպես նաև քաղաքական բռնապետական կոշտ վարչակարգերի վերահաստատման հավանականությունը: Պարզ չէր՝ «նոր ժողովրդավարական» բնորոշմամբ հայտնի հետխորհրդային երկրներում ժողովրդավարական համախմբումը կհաջողվեր արևմտյան չափանիշներին համապատասխան, թե՞ ավտորիտար համակարգերը կվերածնվեին՝ փոխարինվելով նորերով: Ուստի հետխորհրդային փոխակերպվող երկրների առանցքային և առաջնահերթ խնդիրը արդյունավետ սահմանադրական մոդելի և կառավարման համակարգի ընտրությունն էր: Նորանկախ երկրների քաղաքական էլիտաների ներկայացուցիչները կանգնած էին կառավարման այնպիսի ձևի ընտրության հարցի առաջ,

որը հստակ կամրագրեր պետական իշխանության մարմինների տեղը քաղաքական համակարգում: Ժողովրդավարության պատմության մեջ երբևէ այդքան երկրներ չէին հայտնվել փոխակերպման գործընթացում, որքան նշված ժամանակահատվածում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Ուսումնասիրել և վեր հանել կերպափոխման գործընթացների արտաքին գործոնները:
2. Վեր հանել քաղաքական արդիականացման ներքին օրինաչափությունները:
3. Դասակարգել և վերլուծել փոխակերպվող հասարակություններում պառլամենտարիզմի զարգացմանը նպաստող գործոնները:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Կերպափոխման գործընթացների արտաքին գործոնները:
2. Քաղաքական արդիականացման ներքին օրինաչափությունները:
3. Փոխակերպվող հասարակություններում պառլամենտարիզմի զարգացմանը նպաստող գործոնները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Гоббс Т.,** Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского, https://www.civisbook.ru/files/File/-Gobbs_Leviafan.pdf, հասանելի՝ 15.06.2020:

2. **Гранкин И. В.,** Парламент России, https://www.studmed.ru/view/-grankin-iv-parlament-rossii_34751dc8bad.html, հասանելի՝ 20.02.2018:

Գիտական հոդվածներ

1. **Растоу Д.,** Переходы к демократии: попытка динамической модели, Полис, 1996, № 5, с. 5-15.
2. **Ревина С., Суркова О., Виленский Н.**, Парламентаризм в России: проблемы истории, современности, перспектив развития, Вестник Волжского университета имени В.Н. Татищева № 1, том 2, 2017, с. 1-8.
3. **Сысолятина Е. Л.,** Современный парламентаризм: институционально-правовая парадигма, http://ars-administrandi.com/article/-Sysolyatina_2009_1.pdf, հասանելի՝ 24.02.2018:
4. **Тарасов И.,** Диалектика парламентаризма и президенциализма в Центрально-Восточной Европе, https://cyberleninka.ru/article/n/-dialektika-parlamentarizma-i-prezidentsializma-v-tsentralno-vostochnoy-evrope, հասանելի՝ 10.10.2019:
5. **Тычинская Т.,** Либеральная концепция демократического государства Дж. Ст. Милля (по книге «Размышления о представительном правлении». Спб., 1863 г.), https://cyberleninka.ru/-article/n/liberalnaya-kontseptsiya-demokraticheskogo-gosudarstva-dzh-st-millya-po-knige-razmyshleniya-o-predstavitelnom-pravlenii-spb-1863-g, հասանելի՝ 06.09.2019:
6. **Schmitt C.,** Die geistesgeschichtliche Lage des heutigen Parlamentarismus, Duncker und Humbolt, Berlin, https://www.duncker-humblot.de/_files_media/leseproben/9783428550302.pdf, հասանելի՝ 10.08.2019:
7. **Schulders G.,** Die Besonderheiten der asiatischen Transformationsprozesse, https://www.europa-uni.de/de/forschung/institut/institut_fit/publikationen/discussion_papers/1998/98-14-Schulders.pdf, հասանելի՝ 15.04.2020:

8. **Szabo M.,** Proteste und soziale Kosten des Systemwandels in der postkommunistischen Demokratie: der Fall Ungarn, https://www.europa-uni.de/de/forschung/institut/institut_-fit/publikationen/discussion_papers/2000/00-07-Szabo.pdf, հասանելի՝ 15.04.2020:
9. **Thomas E.,** Systemtransformation als umfassender institutioneller Wandel: Die fünf Dimensionen der Transformationsprozesse in Osteuropa, https://www.europa-uni.de/de/forschung/institut/institut_fit/-publikationen/discussion_papers/2000/00-12-Eger.pdf, հասանելի՝ 15.04.2020:
10. **Wagener H.-J.,** Rückkehr nach Europa, https://www.europa-uni.de/de/forschung/institut/institut_fit/publikationen/discussion_papers/1999/99-16-Wagener.pdf, հասանելի՝ 15.04.2020:
11. **Wagener H.-J.,** Transformation als historisches Phänomen, https://www.europa-uni.de/de/forschung/institut/institut_fit/publikationen/discussion_papers/1996/96-7-Wagener.pdf, հասանելի՝ 15.04.2020:
12. **Weber M.,** Parlament und Regierung im neugeordneten Deutschland, Schriften zur Politik, http://www.zeno.org/Soziologie/M/Weber,+Max/Schriften+zur+Politik/Parlament+und+Regierung+im+neugeordneten+Deutschland/V.+Parlamentarisierung+und+Demokratisierung, հասանելի՝ 15.06.2020:
13. **Weber M.,** Wirtschaft und Gesellschaft, Kapitel 6: Parlamentarismus und Demokratie, http://geser.net/gesleh/ss06dem/Handout_Langova_-06.pdf, հասանելի՝ 15.09.2019:
14. **Zagorovskaya O.,** Die politische und wirtschaftliche Transformation in Belarus und Polen im Vergleich, https://www.ssoar.info/ssoar/-bitstream/handle/document/21851/ssoar-2005-zagorovskaya-die_-politische_und_wirtschaftliche_transformation.pdf?sequence=1&isAllowed=y&lnkname=ssoar-2005-zagorovskaya-die_politische_und_-wirtschaftliche_transformation.pdf, հասանելի՝ 15.06.2020:

Համացանցային աղբյուրներ

1. PARLINE database on national parliaments, http://archive.ipu.org/parline-e/parlinesearch.asp, հասանելի՝ 15.06.2020:
2. Политические и административные реформы в странах Восточной Европы, https://laws.studio/politicheskaya-teoriya-rf/politicheskiei-administrativnyie-reformyiv-73905.html, հասանելի՝ 10.10.2019:

ԹԵՄԱ ՎԵՑԵՐՈՐԴ
ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Աշխարհի երկբևեռ համակարգի փլուզումից հետո պատմական նոր իրականություն ձևավորվեց: Աշխարհակարգի փոփոխությունը հանգեցրեց ուժային վերադասավորումների և արմատական քաղաքական տեղաշարժերի: Փոխակերպման գործընթացներից զերծ չմնացին նաև Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրները: Նախկին սոցիալիստական ճամբարի տարածքում ամբողջատիրական վարչակարգերի անկումից և նորանկախ պետությունների առաջացումից հետո արագ զարգացող արդիականացման գործընթացները շոշափում էին հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտները, մասնավորապես քաղաքական ոլորտը: Նշված գործընթացների պատճառանքային հիմքերի վերաբերյալ քաղաքական վերլուծաբանների շրջանում առկա են տարբեր մոտեցումներ: Համաձայն դրանցից մեկի, որի կրողներն են նաև լիտվացի պատմաբան Մ. Ադոմենասը և ռուս վերլուծաբան Գ. Կասպարովը, կոմունիստական վարչակարգերի անկումը Արևելյան Եվրոպայի երկրներում դիտվում է որպես երկարատև ազգային-ազատագրական պայքարի արդյունք: Հաջորդ մոտեցմանը հարող քաղաքագետները, որոնց թվին դասվում է Ա. Աչկասովը, հետկոմունիստական երկրներում ընթացող կերպափոխման և ժողովրդավարացման գործընթացները կապում են արտաքին գործոնների հետ՝ վկայակոչելով հետևյալ իրողությունները՝

- «համաշխարհային սոցիալիստական համակարգի» փլուզում,
- կոմունիզմի անկումից հետո ձևափոխված աշխարհի առանձնահատկություն,
- «երկբևեռ» աշխարհի ավարտ և ԱՄՆ-ի միանձնյա լիդերության հաստատում,
- հետկոմունիստական պետությունների՝ համաշխարհային տնտեսական և աշխարհաքաղաքական համակարգին ինտեգրման լիովին նոր մարտահրավերներ,
- ժողովրդավարական գաղափարախոսության անսխալականության մասին պատկերացումների գերակայություն և այլն:

Հարկ է նշել, որ հետխորհրդային յուրաքանչյուր պետություն փոխակերպման ուրույն ուղով է ընթացել: Ըստ այդմ՝ ինչպես Արևելյան Եվրոպայի երկրների պարագայում, այս տարածաշրջանի պետություններում ևս պառլամենտարիզմի զարգացման ընթացքը, քաղաքական մշակույթի առանձնահատկություններով պայմանավորված, մի շարք ընդհանրություններ և տարբերություններ ունի: Ի թիվս այլ գործոնների՝ հարկ է նշել բոլոր երկրներում տևական ժամանակահատված մեկ միասնական գաղափարախոսության տիրապետման փաստը, մասնավոր սեփականության և ազատ շուկայական հարաբերությունների բացակայությունը, խորհրդային շրջանում հաստատված նույնանման ինստիտուցիոնալ մոդելները, որոնք առերևույթ հիշեցնում էին խորհրդարանական հանրապետություններ, սակայն իրականում կուսակցապետությունների տարբեր ձևեր էին: Տարածաշրջանի երկրներին միավորում էր նաև քաղաքական մշակույթի որոշ բաղկացուցիչների՝ քաղաքական հաղորդակցության, կուսակցական դպրոց-

ների նմանությունը: Չնայած առկա ընդհանրություններին՝ արդիականացման, ժողովրդավարացման և պառլամենտարիզմի կայացման արդյունքների տեսանկյունից տարածաշրջանի տարբեր երկրներում տարբեր պատկերներ են արձանագրվել: Պառլամենտարիզմի առանձնահատկությունների ուսումնասիրումն այստեղ թույլ է տալիս վեր հանել մի շարք միտումներ: Այս տեսանկյունից ինստիտուցիոնալ կայացվածության, ինչպես նաև փոխակերպման գործընթացի հաջողության գնահատման կարևոր ցուցիչ է խորհրդարանի իրավասությունների սահմանը, այսինքն, թե տարածաշրջանի այս կամ այն երկրում ինչպիսի դերակատարություն ունի խորհրդարանը և ինչպիսի հարաբերակցության մեջ է իշխանության մյուս ճյուղերի հետ:

Ինչպես տեսանք, Արևելյան Եվրոպայի երկրներում, որտեղ կոմունիստական վարչակարգը գոյության ավելի քիչ պատմություն ուներ, ի տարբերություն հետխորհրդային երկրների, նոր քաղաքական էլիտան գիտակցաբար գնաց իշխանությունների ինստիտուցիոնալ տարանջատմանը՝ ձևավորելով կամ «կանցլերային հանրապետություններ» ուժեղ վարչապետներով և բավականաչափ ուժեղ խորհրդարաններով, կամ էլ կիսանախագահական համակարգեր, որոնց շրջանակներում նախագահը տիրապետում էր կարևոր լիազորությունների, սակայն գործադիր իշխանության միակ գլուխը չէր: Այս դեպքում վերջինս և կառավարությունը քաղաքական տարբեր ճամբարների էին պատկանում (Լեհաստան, Ռումինիա և այլն): Բացի դրանից՝ այն երկրներում, որտեղ փոխակերպման սկզբում կարևորվեց խորհրդարանի դերը, իշխանության փոխանցումը ընտրությունների միջոցով հետագայում դարձավ քաղաքական նորմ: Ի տարբերություն Արևե-

լյան Եվրոպայի երկրների, փոխակերպման սկզբնական տարիներին հետխորհրդային երկրներն ընտրեցին կառավարման մաքուր նախագահական կամ էլ նախագահական-խորհրդարանական ձևերը: Չնայած զարգացման ընդհանուր օրինաչափություններին ու միտումներին՝ հետխորհրդային տարածքի երկրները վարչակարգերի բնույթով ու կառավարման համակարգերով տարբերվեցին: Ներկայումս նշված երկրները կարելի է բաժանել 4 հիմնական խմբի՝ դասակարգման հիմքում դնելով կառավարման համակարգը:

Նախագահական հանրապետություններ են Բելառուսը, Ադրբեջանը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Ղրղզստանը, Ղազախստանը, Տաջիկստանը: Ռուսաստանի Դաշնությունը նախագահական-խորհրդարանական հանրապետություն է: Խորհրդարանական-նախագահական հանրապետություն է Ուկրաինան: Խորհրդարանական հանրապետություններ են Հայաստանի Հանրապետությունը, Վրաստանը, Մոլդովայի Հանրապետությունը:

Նշված երկրների կառավարման համակարգերի կատարելագործման էվոլյուցիայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վեր հանել մի շարք առանձնահատկություններ: Ինչպես տարածաշրջանի մյուս երկրների, այնպես էլ ռուսական ժամանակակից պառլամենտարիզմի ձևավորման սկիզբը համընկնում է Խորհրդային Միության փլուզման շրջանի հետ: ՌԴ-ում նախագահի և խորհրդարանի՝ Դաշնության ժողովի իրավասությունների համեմատությունը ցույց է տալիս, որ առաջինի լիազորություններն անհամեմատ մեծ են: Այս ավանդույթի հիմքերը դրվել են 1992-1993 թվականներից սկսած: Նշված տարիները ՌԴ-ի համար օրենսդիր իշխանությունը մարմնավորող Գերագույն խորհրդի և գործադիր իշ-

խանության կրող՝ նախագահի իշխանության միջև սուր հակադրության շրջան էին: 1993 թ. դեկտեմբերի 12-ի սահմանադրության ընդունմամբ այս փուլն ավարտվեց խորհրդարանի իրավասությունների էական կրճատմամբ: Հետաքրքիր է, որ Սահմանադրության ընդունման օրը ՌԴ-ում անցկացվեցին նաև Դաշնության ժողովի ընտրություններ: Նման սցենար կրկնվեց նաև ՀՀ-ում 1995 թ., երբ միևնույն օրը տեղի ունեցան և՛ խորհրդարանական ընտրություններ, և՛ սահմանադրական հանրաքվե: Սա փաստում էր հետխորհրդային երկրներում իրավաքաղաքական ընթացակարգերի չկայացվածության մասին, մյուս կողմից հանրության անտարբեր վերաբերմունքի դրսևորումն էր երկրի հիմնական օրենքի նկատմամբ: ՌԴ-ում փոխակերպման սկզբնական փուլի հիմնական առանձնահատկությունը քաղաքականության ծայրաստիճան բևեռացվածությունն էր, կոմունիստական վարչակարգի վերականգնման սպառնալիքը և զարգացման ռազմավարության շուրջ քաղաքական ուժերի միջև կոնսենսուսի բացակայությունը: Սա է պատճառներից մեկը, որ 1990-ական թթ. ՌԴ-ի համար ուժեղ խորհրդարան ենթադրող կառավարման մոդելի ընտրությունն անընդունելի էր: Մի կողմից հասարակության ու վերնախավի, մյուս կողմից քաղաքական ուժերի միջև բևեռացումը պահանջում էր նախագահական իշխանության գերակայություն, որի պարագայում բարեփոխումները կիրականացվեին վերևից: Հարկ է հաշվի առնել նաև այս շրջանին հատուկ սոցիալ-տնտեսական ծանր վիճակը: ՌԴ-ում տնտեսական աճի առաջին նշանները նկատվեցին 2000 թվականից սկսած:

Որակյալ խորհրդարանի գործունեությունը մեծապես կախված է դրա ձևավորման կարգից: Հետխորհրդային շրջա-

նում ՌԴ-ի ընտրական օրենսգրքերի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ տարիների ընթացքում դրանք հետևողականորեն փոփոխվել և կատարելագործվել են: Ընդ որում, միտումն ուղղված է եղել համամասնական ընտրակարգի զարգացմանը: Մինչև 2007 թ. խորհրդարանը ձևավորվում էր խառը՝ մեծամասնական-համամասնական ընտրակարգի պայմաններում: Սակայն բազմակուսակցականության զարգացման նպատակով 2007 թ. նախապատվությունը տրվեց բացարձակ համամասնական ընտրակարգին: Դրական տեղաշարժեր են գրանցվել նաև կուսակցական համակարգի կայացման ուղղությամբ, զարգացել են խորհրդարանական ընթացակարգերը: Որպես օրենսդիր մարմին ռուսական խորհրդարանը հսկայական քանակությամբ օրենքներ է ընդունել հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտների կարգավորման հետ կապված: Սակայն հետխորհրդային շրջանում ՌԴ-ում պառլամենտարիզմի կայացման և զարգացման ընթացքի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ այն այստեղ ավելի շատ խնդիրներ, քան հաջողություններ ունի: Առանցքային խնդիր է իշխանության թևերի անհավասարակշռությունը: Չնայած սահմանադրությամբ հռչակված իշխանությունների հստակ բաժանմանը՝ հասարակության քաղաքական կյանքում նախագահի ինստիտուտն է գերիշխող դիրք զբաղեցնում: Բացի դրանից՝ նախագահը, այսպես կոչված, «իշխանության կուսակցության» միջոցով վերահսկողություն է իրականացնում մի կողմից կառավարության, մյուս կողմից խորհրդարանի նկատմամբ՝ գործնականում հնարավորություն ունենալով ընդունել իրեն անհրաժեշտ օրենքները: Հետխորհրդային Ռուսաստանի տարբեր գումարումների խորհրդարանների կազմերի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ դրանցում որոշ ժա-

մանակահատվածներում մեծ թիվ են կազմել ձեռնարկատերերը, սպորտսմենները, շոու-բիզնեսի ներկայացուցիչները: Վերջիններիս քաղաքական, իրավական, տնտեսական գիտելիքները ոչ միշտ են բավարարել խորհրդարանականին ներկայացվող պահանջները: Ոչ կոմպետենտ պատգամավորների առկայությունից էականորեն տուժում է խորհրդարանի գործունեությունը, հետևաբար նաև գործադրին վերահսկելու գործառույթը:

ՌԴ-ի քաղաքական համակարգը դեռևս շարունակում է գտնվել փոխակերպման փուլում: Նկատելի է, որ հետխորհրդային տարիների ընթացքում հետևողականորեն ձևավորվել է իշխանության ուղղահայաց համակարգ, որը թեպետ բազմէթնիկ և հսկայածավալ ՌԴ-ի համար միասնականության պահպանման, անջատողական տրամադրությունների զսպման տեսանկյունից օգտակար է, սակայն ժողովրդավարության համար, երբեմն, լրջագույն խնդիրներ է առաջացնում:

Ի տարբերություն ՌԴ-ի՝ Բելառուսում անկախության առաջին տարիներին խորհրդարանի դերակատարությունը բավականին մեծ էր: Բելառուսական ժամանակակից պառլամենտարիզմի կայացման սկզբնական փուլում՝ 1990-1994 թթ., ինքնիշխան պետությունը քայլեր էր կատարում որպես խորհրդարանական հանրապետություն: Նշված ժամանակամիջոցում՝ մինչև Սահմանադրության ընդունումը, այստեղ պառլամենտարիզմը զարգանում էր 1978 թ. Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունների և լրացումների շրջանակներում, ինչը դրական իմաստով արմատականորեն ազդել էր Գերագույն խորհրդի գործունեության վրա: Հասկանալու համար այդ տարիներին խորհրդարանին հատկացված կարևոր տեղը՝ հարկ է հիշատակել, որ վերջինիս էր վերա-

պահված երկրի բարձրագույն օրենքի՝ Սահմանադրության ընդունման և փոփոխման իրավասությունը: 1994 թ. մարտի 15-ին ընդունված Սահմանադրության 6-րդ հոդվածում ամրագրված էր պետությունում իշխանությունների տարանջատումը օրենսդիր, գործադիր և դատական թևերի: Մինչև 1996 թ. ընդգրկող այս փուլը կարելի է որակել որպես ամերիկյան մոդելի նախագահական հանրապետության շրջան: Սահմանադրությամբ ամրագրված էին իշխանությունների տարանջատման սկզբունքը և օրենքի գերակայությունը, ինչը ենթադրում էր իշխանության ճյուղերի՝ միմյանց վերահսկում, զսպում և հակակշռում: Գործնականում, սակայն, նախագահի և խորհրդարանի միջև կտրուկ հակադրությունները, երբեմն, դուրս էին գալիս սահմանադրության շրջանակներից: Նշված պայքարի արդյունքը նախագահի իշխանության ուժեղացման հաշվին խորհրդարանի դերակատարության էական թուլացումն էր: 1996 թ. նոյեմբերի 24-ին տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումների արդյունքում դրվեցին սուպերնախագահական հանրապետության հիմքերը: Նախագահի վրա ընկած էին պետության գլխի, Սահմանադրության, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխավորի գործառույթները: Հետագա տարիներին նկատելի է նախագահի մենիշխանության սաստկացում. ընդհուպ 2004 թ. նախագահ Ա. Լուկաշենկոյի նախաձեռնությամբ հանրաքվեով լուծվեց ցմահ նախագահության հարցը: Արդյունքում ներկայումս վերջինիս նախագահության վեցերորդ ժամկետն է ընթանում:

Այսպիսով, որքան էլ որ պարադոքսալ թվա, Բելառուսում պառլամենտարիզմի զարգացման շրջանը, չնայած առկա թերություններին, համընկնում է 12-րդ և 13-րդ գումարման Գե-

բազույն խորհուրդների գործունեության ժամանակահատվածի հետ: 12-րդ գումարման Գերագույն խորհուրդն, օրինակ, ձևավորվել էր 1990 թ. մարտ-մայիս ամիսներին անցկացված անհամեմատ ազատ ընտրությունների արդյունքում: 1996 թ. սահմանադրական բարեփոխումներից հետո Ազգային ժողով անվանումը ստացած օրենսդիր և ներկայացուցչական մարմինը լրջորեն զիջում է իր նախորդներին: Ինչպես ժամանակը ցույց տվեց, այդուհետ այն գործիք դարձավ նախագահի ձեռքին՝ լիարժեք գործառնող խորհրդարանին հատուկ մի խումբ իրավասություններից զուրկ:

Յուրաքանչյուր խորհրդարանի գործունեության արդյունավետության գնահատման տեսանկյունից կարևոր է պետության գլխի և կառավարության նկատմամբ նրա վերահսկողական գործառույթների վերհանումը: Ներկայումս Բելառուսում խորհրդարանը նվազագույն չափով է իրականացնում իր այդ կենտրոնական գործառույթը: Պառլամենտարիզմի կարևորագույն հիմքերից մեկը հանդիսացող խորհրդարանական քննարկումներն ու բանավեճերը ևս այստեղ հազվադեպ են հանդիպում: Խորհրդարանի նիստերն ուղիղ կապով չեն հեռարձակվում: Ինչպես վերին, այնպես էլ ստորին պալատներում բացակայում են կուսակցական ֆրակցիաները: Սա մի կողմից խոսում է երկրում կուսակցական համակարգի ոչ բարվոք վիճակի, ընդդիմադիր կուսակցությունների թուլության մասին, որոնց բնակչությունը չի վստահում Ազգային ժողովում ներկայացուցչական գործառույթներ իրականացնողի դերը: Մյուս կողմից կուսակցությունների թուլությունը իշխանությունների վարած ոչ ազատական քաղաքականության հետևանք է, որն ավելի է սաստկանում նախընտրական շրջանում: Արդյունքում Բելառուսի խորհրդարանը բաղկացած է անկուսակցա-

կան խորհրդարանականներից: Եթե հսկայական տարածք ունեցող ՌԴ-ի համար արդարացված է երկպալատանի խորհրդարանի գոյությունը, ապա Բելառուսի պարագայում Ներկայացուցիչների պալատից և Հանրապետության խորհրդից բաղկացած երկպալատանի խորհրդարանի առկայությունը հիմնավորման կարիք ունի: Այսպիսով, Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովը չի կատարում ժամանակակից պետությունների խորհրդարաններին բնորոշ մի շարք կարևորագույն գործառույթներ: Նախագահը կանխամտածված կերպով զսպում է պառլամենտարիզմի զարգացումը երկրում, քանի որ սպառնալիք է տեսնում իր մենաշնորհած իշխանության նկատմամբ:

Հետխորհրդային տարածության հաջորդ սլավոնական երկիրը՝ Ուկրաինան, ևս 1990-ական թթ. սկզբներին կանգնած էր տարածաշրջանի մնացած պետություններին հուզող միևնույն հարցի առաջ՝ ինչպիսի քաղաքական մոդել ընտրել և զարգացնել երկրում: Փոխակերպման սկզբնական տարիները Ուկրաինայի համար արմատական տեղաշարժերի, ժողովրդավարության վերելքների և վայրէջքների շրջան էին: Ներկայումս էլ քաղաքական, սոցիալական, տնտեսական համակարգային բնույթի լրջագույն խնդիրներ շարունակում են մնալ չլուծված: Ինստիտուցիոնալ կերպափոխման սկիզբն Ուկրաինայում ևս տեղի էր ունենում 1978 թ. ընդունված սահմանադրության փոփոխման պայմաններում, ինչն էականորեն դժվարացնում էր ժողովրդավարական նոր ինստիտուտների գործառնումը: Եթե ՌԴ-ում և Բելառուսում սահմանադրություններն ընդունվեցին համապատասխանաբար 1993 և 1994 թթ., ապա Ուկրաինայում իրավական ճգնաժամը շարունակվեց մինչև 1996 թ., երբ խորհրդարանի և նախագահի միջև եր-

կարատն վեճերից հետո ընդունված սահմանադրությամբ երկրում հաստատվեց կառավարման նախագահական-խորհրդարանական համակարգ: Հարկ է նշել, որ այստեղ փոխակերպման առաջին իսկ տարիներից նախագահի իշխանության ուժեղացման հստակ գիծ էր տարվում: 1994 թ. չկայացած կուսակցական համակարգի և մեծամասնական ընտրակարգի պայմաններում ձևավորված Գերագույն Ռադան դժվարությամբ էր պայքարում այս միտման դեմ: Պատճառներից մեկը, ինչպես Բելառուսի պարագայում, օրենսդիր մարմնի կազմում հստակ քաղաքական հայացքներ չունեցող մեծ թվով անկախ պատգամավորների առկայությունն էր: 1996 թ. Սահմանադրության ընդունմամբ առավել նշմարվեցին իշխանության ավտորիտարացման միտումները: Լ. Կուչմայի վերընտրվելը նախագահի պաշտոնում հանգեցրել էր հականախագահական խմբավորումների ձևավորմանը: Գլխավոր դժգոհությունը նախագահի՝ սահմանադրական փոփոխությունների գործընթաց նախաձեռնելու և խորհրդարանի իրավասությունների կրճատման հաշվին իր լիազորությունների շրջանակը ընդլայնելու հանգամանքի հետ էր կապված, ինչն առավել խորացրեց նախագահի և խորհրդարանի միջև հակադրությունները:

Ուկրաինայի օրինակով ևս մի հատկանշական միտում ենք նկատում. հետխորհրդային տարածության երկրների նախագահական առաջին ընտրություններում հիմնականում հաղթանակ էին տանում խորհրդային անցյալ ունեցող քաղաքական գործիչները, որոնց աշխարհընկալումները և անձնային հատկանիշները մեծապես ազդեցին իրենց երկրներում ժողովրդավարության հետագա զարգացման վրա: Վերջիններից էր նախկինում խորհրդային իշխանության կարկառուն ներկայացուցիչ Լ. Կրավչուկը, որը 1991 թ. ուկրաինական նա-

խագահական առաջին ընտրություններում զբաղեցրեց պետության գլխի պաշտոնը: 1994 թ. նախագահ ընտրվեց Լ. Կուչման, որը 1992-1993 թթ.՝ Լ. Կրավչուկի կառավարման շրջանում, վարչապետի պաշտոնն էր զբաղեցնում: 2004 թ. նախագահական ընտրությունների ժամանակ արդեն զանգվածային բողոքի ցույցերի ճնշման տակ այս շղթան կոտրվեց, և Լ. Կուչմայի իրավահաջորդ Վ. Յանուկովիչին չհաջողվեց ստանձնել երկրի ղեկը: Ընտրություններում հաղթանակ տարավ Վ. Յուշչենկոն, իսկ վարչապետի պաշտոնը ստանձնեց Յու. Տիմոշենկոն: Այս իրադարձություններին հաջորդեց սահմանադրական նոր փոփոխությունների գործընթաց, ինչի արդյունքում տասը տարի անց Ուկրաինան վերածվեց խորհրդարանական-նախագահական հանրապետության: Այդուհետ կառավարությունը ձևավորվելու էր խորհրդարանի կողմից, իսկ նախագահին իրական հնարավորություն էր ունենալու ցրելու խորհրդարանը: Սրանով մի կողմից իշխանությունների հակակշռման նոր մեխանիզմներ էին ամրագրվում, մյուս կողմից նախագահի և վարչապետի հակասություններն ավելի էին խորանում: Արդյունքը 2006 թ. տեղի ունեցած հերթական խորհրդարանական ընտրություններից ընդամենը մեկ տարի հետո՝ 2007 թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններն էին, որոնք անցկացվեցին բացառապես կուսակցական ցուցակներով: Նրանք, ովքեր 2004 թ. աշնանը տեղի ունեցած հեղափոխական իրադարձություններից հետո հավատում էին, որ Ուկրաինան թռիչքաձև ժողովրդավար է դառնալու, շուտով հիասթափվեցին: 2010 թ. Ուկրաինայի քաղաքական համակարգը խորը ճգնաժամի մեջ հայտնվեց, ինչը պայմանավորված էր ինչպես քաղաքական և տնտեսական լրջագույն խնդիրներով, այնպես էլ արտաքին քաղաքական կողմնորոշման ոչ հստակ ընտրու-

թյամբ: Նախագահական ընտրություններում հաղթանակ տարավ Վ. Յանուկովիչը: Նրա իշխանության գալով՝ 2004 թվականի սահմանադրական փոփոխությունները չեղարկվեցին, ընտրական համակարգը նորից վերադարձավ հին՝ խառը ձևին, նախագահի իշխանության անձնիշխանական միտումներն ուժեղացան: Պատմական փորձը ցույց տվեց, որ հեղափոխության ճանապարհով տեղի ունեցող զարգացումն իր հետ բազմաթիվ խնդիրներ է բերում: Թեպետ «Նարնջագույն հեղափոխությունից» հետո ժողովրդավարության զարգացումը երկրում աճ ապրեց, սակայն անհրաժեշտ քաղաքական կայունություն, ինչպես հետո տեսանք, չապահովվեց: Ուկրաինան ցնցող հաջորդ ալիքը մայդանյան իրադարձությունների հետ է կապված: Եվրոմայդանից հետո՝ 2015 թ. աշնանը, տեղի ունեցած սահմանադրական հանրաքվեի արդյունքում խորհրդարանին մեծ լիազորություններ վերադարձվեցին: Ներկայումս դրական շարժընթաց է նկատվում սահմանադրական գործընթացին վերջ դնելու, կուսակցական համակարգի բարեփոխման, բնակչության քաղաքական գիտակցության մակարդակի բարձրացման ուղղությամբ, սակայն նշված բարեփոխումները դեռ բավարար չեն, որպեսզի Ուկրաինայում քաղաքական փոխակերպումը համարվի ավարտված:

Հետխորհրդային տարածաշրջանի հաջորդ խումբ՝ կենտրոնասիական երկրները՝ Թուրքմենստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը, անկախացումից հետո որդեգրեցին ավտորիտար քաղաքական վարչակարգեր՝ հայրիշխանական մոդելին համապատասխան: Կենտրոնական Ասիայի հինգ հանրապետություններում էլ սուպերնախագահական կառավարման ձևեր հաստատվեցին: Քաղաքական լիդերներն այս երկրներում ժողովրդի կողմից դիտարկ-

վում են որպես ազգի հայր: Իշխանական ողջ համակարգը կառուցված է այս սխեմայի վրա: Տարածաշրջանում հայրիշխանական համակարգերի ձևավորման պատճառներից մեկը կլանային ավանդույթների արմատավորվածությունն է դեռևս մինչև խորհրդային տարածքում հայտնվելը: Կլանային համակարգը խորը արմատներ ունի ոչ միայն էլիտայի, այլև հասարակության մակարդակում: Սա դրական գործառույթներ իրականացնելու հետ մեկտեղ մեծապես հարվածում է քաղաքական ինստիտուտների կայացման գործին: Այստեղ ինդիվիդուալիստական արժեքները ստորադասված են կոլեկտիվիստական արժեքներին: Հետխորհրդային մյուս երկրներից կենտրոնասիական երկրները տարբերվում են նաև իսլամի իրականացրած դերակատարությամբ: Չնայած խորհրդայնացման 70 տարիներին՝ իսլամն իր նշանակությունը պահպանել էր առօրյա մակարդակում, ուստի պատահական չէ, որ դավանաբանական գործոնը մեծապես օգտագործվում է տարածաշրջանի երկրներում իշխանության պահպանման համար: Իսլամական արժեքաբանությունից բխող իշխանության միաձույլ, անբաժան սկզբունքը այն կրողին վեր է դասում ժողովրդից: Ըստ այդմ՝ պառլամենտարիզմի զարգացման համար այդչափ կարևոր իշխանությունների տարանջատման սկզբունքի նկատմամբ վերաբերմունքն այս երկրներում այնքան էլ դրական չէ: Որպես կառավարման ձև տարածաշրջանի երկրներն ընտրել և պահպանել են ուժեղ տիպի նախագահական կառավարման համակարգը, որոշ երկրներում գործում է ցմահ նախագահության ինստիտուտը: Նախագահը իշխանության մյուս ճյուղերից վեր է կանգնած և յուրօրինակ սահմանադրական միապետի դեր է իրականացնում, ունի բացարձակին մոտ լիազորություններ: Որպես վառ օրինակ, կարելի է

հիշատակել Թուրքմենստանի «Թուրքմենբաշի» տիտղոսով հայտնի նախագահ Ս. Նիյազովի անձի պաշտամունքը, որի դրսևորումներից մեկն էլ ամեն առավոտ դպրոցականներին պարտադրված երդումն էր. «Եթե ես դավաճանեմ մեծն Սապարմուրատ Թուրքմենբաշիին, թող իմ սիրտը կանգ առնի»: Խորհրդային դպրոցի ներկայացուցիչ Ս. Նիյազովի մահից հետո նրա դիրքերը թուլացան: Սակայն վերջինիս հաջորդած Գ. Բերդիմուհամեդովի կառավարման տարիներին վարչակարգային էական փոփոխություններ տեղի չունեցան:

Տարածաշրջանի երկրների քաղաքական առանձնահատկություններից է կուսակցությունների և հասարակության միջև թույլ կապը, որը հիմնականում ընտրությունից ընտրություն է ակտիվանում: Նախագահական ընտրություններն առավելապես ժողովրդավարության տպավորություն ստեղծելու համար են անցկացվում: Էլիտաների հերթափոխների դեպքում էլ քաղաքական համակարգը բովանդակային փոփոխությունների չի ենթարկվում: Օրինակ, Ղրղզստանում 2005 թ. «վարդակակաչների հեղափոխությունից»՝ Ա. Ակաևի իշխանության անկումից, հետո երկրում վերածնվեցին արխայիկ ինստիտուտները, իշխանությունը փոխարինվեց նոր միակենտրոնությամբ:

Կենտրոնասիական երկրները բնորոշվում են որպես ավտորիտար ժողովրդավարություններ: Գործադիր իշխանությունն այս երկրներում ամբողջությամբ պատկանում է նախագահին, իսկ խորհրդարանական ընտրությունները մրցակցային չեն: Սրանք երկրներ են, որոնք գտնվում են միաժամանակ իսլամական, ինչպես նաև ամբողջատիրական-կոմունիստական քաղաքական մշակույթների ազդեցության ներքո և պահպանել են ավանդական պատրիարխալ հասարակության

մնացորդները: Այս երկրներում իրատեսական է ոչ թե ժողովրդավարացման, այլ արդիականացման գործընթացների խթանումն ու քաղաքական բազմակարծության արմատավորումը:

Հետխորհրդային տարածության հաջորդ ենթատարածաշրջանի՝ Հարավային Կովկասի մաս Ադրբեջանում խորհրդային կարգերի տապալումից հետո լիբերալ ավանդույթների բացակայության պայմաններում ժողովրդավարական արժեքների հռչակումը ձևական էր: Ուստի արևմտյան կառուցակարգերի ներդնումը մեխանիկական բնույթ էր կրում: Անցումային շրջանի բարդություններից մեկն էլ խորհրդային կարգերի խորը արմատավորվածությունն էր: Ադրբեջանում ևս Գերագույն խորհուրդը իր ազդեցությունը պահպանեց մինչև 1993 թ.: 1995 թ. ընդունված Սահմանադրության բովանդակության վրա էապես ազդեցին քաղաքական անկայունությունից հանրային դժգոհությունները, պարտությունը պատերազմում, պետական դավաճանությունները: Արդյունքում նախագահի լիազորություններն աներևակայելիորեն ընդլայնվեցին: Որպես օրինակ բավարար է նշել, որ վերջինս նաև դատական իշխանության անկախության երաշխավորն էր և Միլլի Մեջլիսի հաստատմանն էր ներկայացնում պետական բյուջեն: Ներկայումս Ադրբեջանում գործում է 1995 թ. Սահմանադրությունը որոշ փոփոխություններով: Ադրբեջանական խորհրդարանը՝ Միլլի Մեջլիսը, նախագահի ինստիտուտին հակակշռելու և զսպելու լուրջ դերակատարություն չի իրականացնում: Այն նախագահի կամքն արտահայտողն է և հասարակական կյանքը կարգավորող կանոններ սահմանողը: Ադրբեջանում ձևական բազմակուսակցական համակարգ է գործում: Խորհրդարանում ընդդիմադիր կուսակցություններ չկան: Տիրապետող է «Նոր Ադրբեջան» կուսակցությունը, մյուս

կուսակցությունները բազմակարծության տպավորություն են ստեղծում: Ապագա խորհրդարանականների ցուցակները յուրաքանչյուր ընտրությունից առաջ նախապես համաձայնեցվում են նախագահականում: Գործող օրենսդրության համաձայն՝ նախագահի իշխանությունը չունի իրական զսպիչներ: Այստեղ գործ ունենք անձնիշխանական վարչակարգի հետ, որի մեկնարկը տրվել է 1995 թ. հուլիսի 15-ին Հ. Ալիևի իշխանության գալով: 2003 թ. վերջինիս որդի՝ Ի. Ալիևի՝ երկրի ղեկը ստանձնելուց հետո արդեն բոլոր հիմքերն առկա էին խոսելու ժառանգական իշխանության մասին: Վերջինիս կառավարման տարիները աչքի են ընկնում ընդդիմության նկատմամբ հալածողական քաղաքականության խորացմամբ, այլակարծության ճնշումներով: 2009 թ. մարտին անցկացված հանրաքվեի արդյունքում հանված է նախագահի՝ երկու անգամից ոչ ավելի պաշտոնավարելու արգելքը: Ի. Ալիևի իշխանությունը անընդհատ երկարաձգելու հնարավորություններ են ստեղծվել: Նման գործողությունները լուրջ խոչընդոտներ են երկրում պառլամենտարիզմի զարգացման համար: Ի. Ալիևի կառավարման տարիներին Ադրբեջանը տնտեսական կայունության բարձր ցուցանիշներ է գրանցել, այն ՀՆԱ-ի աճով գերազանցում է ԱՊՀ մյուս երկրներին, ուստի կանխատեսելի են վերջինիս՝ դեռ վերընտրվելու հնարավորությունները:

Հետխորհրդային տարածքում ավտորիտար վարչակարգերը հեղափոխությունների միջոցով փոփոխելու միտում է նկատվում, ինչն ակնհայտ է Վրաստանում 2003 թ. «Վարդերի հեղափոխությունը», Ուկրաինայում 2004 թ. «Նարնջագույն հեղափոխությունը», Ղրղզստանում 2005 թ. «Վարդակակաչների հեղափոխությունը», Հայաստանում 2018 թ. «Թավշյա հեղափոխությունը», Ղազախստանում 2022 թ. տեղի ունեցած գու-

նավոր հեղափոխության փորձը ուսումնասիրելու արդյունքում: Կա տարածված մոտեցում, ըստ որի կողմնակիցների՝ տարածաշրջանի հեղափոխությունները նախաձեռնված են դրսից, իսկ հետխորհրդային հին վարչակարգերի անկման աջակիցները կամ ուղղակիորեն ԱՄՆ-ն ու ԵՄ-ն են, կամ էլ եվրոպական քաղաքական արժեքների և ինստիտուտների անուղղակի ազդեցությունը: Իրապես, գունավոր հեղափոխությունների պատճառներից մեկը, օրինակ, Վրաստանի և Ուկրաինայի դեպքում աշխարհաքաղաքական կողմնորոշման փոփոխությունն էր դեպի Արևմուտք՝ ԵՄ և ՆԱՏՕ: Սա խթան հանդիսացավ նաև եվրասիական տարածքում ինտեգրացիոն գործընթացների աշխուժացման համար, քանի որ Ռուսաստանը գիտակցում էր, որ իր ավանդական ազդեցության գոտում արևմտյան դիրքերի ուժեղացումը գնալով մեծանում է: Այս մոտեցումը, սակայն, միակողմանի է, քանի որ հեղափոխությունների պատճառները միայն արտաքին գործոնների հետ կապելը ճիշտ չէ: Ղրղզստանում տեղի ունեցած հեղափոխությունը ասվածի վառ օրինակն է: Երկրորդ մոտեցման կողմնակիցները տեղի ունեցած հեղափոխական գործընթացները դիտարկում են որպես ժողովրդավարական գագաթնակետի արտահայտություն: Պետք է հաշվի առնել, որ հեղափոխությունները նաև իշխող վարչակարգերի լեգիտիմության ճգնաժամի, իշխանության ճյուղերի չբալանսավորվածության, մասնավորապես, նախագահական իշխանության ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդիր և դատական իշխանության ճյուղերի վրա հսկայական ազդեցության հետևանք են: Լավագույն կառավարող էլիտան անգամ, երբ չարաշահում է իր լիազորությունների սահմանը և իշխանության մնալը դարձնում է ինքնանպատակ, կորցնում է գործունակությունը և երբ

էլիտաների հերթափոխ կամ տեղի չի ունենում, կամ տեղի է ունենում փակ շրջապտույտի ներսում, վերջնարդյունքը հաճախ հեղափոխություններն են լինում:

Հետաքրքրական է, որ վերը նշված երկրներից չորսի պարագայում հեղափոխությունները սկսել են սահմանադրական բարեփոխումներից՝ ուղղված կառավարման ձևի փոփոխմանը. Վրաստանի և Ուկրաինայի պարագայում կառավարման նախագահական-խորհրդարանական համակարգից խորհրդարանական-նախագահականի, իսկ Ղրղզստանի դեպքում խորհրդարանականի անցման պահանջով: Ինչպես տեսանք, Հայաստանում ևս հեղափոխությանը նախորդել էր սահմանադրական փոփոխությունը և կառավարման նոր համակարգի անցումը: Նշված երկրներում հեղափոխություններից հետո մի կողմից նկատվել են քաղաքական համակարգի ժողովրդավարացման, մյուս կողմից հեղափոխությամբ և ժողովրդավարությամբ իշխանության եկածների՝ իշխանությունը սեփականաշնորհելու որոշակի միտումներ: Վրաստանում Մ. Սահակաշվիլիի արմատական քայլերի արդյունքում, օրինակ, պետական ապարատն ամբողջությամբ բարեփոխվեց, մասնավորապես հատկանշական են կադրային փոփոխությունների կատարումը, ուժային կառույցներում բարեփոխումների անցկացումը: Սակայն Սահմանադրական փոփոխություններից հետո նրա վարչակարգը ավտորիտար գծեր որդեգրեց, 2008 թ. հունվարի 5-ի արտահերթ նախագահական ընտրություններում նա ստացավ ձայների 56 տոկոսը: Ընտրություններն անցան բողոքի մեծ ալիքի պայմաններում: Մ. Սահակաշվիլին ոչ միայն չկրճատեց, այլև ընդլայնեց նախագահի լիազորությունները, ինչը նրա համար քաղաքական համակարգում գերիշխող դիրք երաշխավորեց: Բացասական

գործընթացներ էին նաև ընդդիմադիր գործիչ Զ. Ժվանիայի, ազդեցիկ միլիոնատեր Մ. Պատարկացիշվիլիի սպանությունները, խորհրդարանի խոսնակ և Մ. Սահակաշվիլիի նախկին համակիր Ն. Բուրջանաձեի պաշտոնից հեռանալը:

Հետխորհրդային հաջորդ պետության՝ Մոլդովայի օրինակով տեսնում ենք, որ տարածաշրջանի որոշ պետություններում պառլամենտարիզմի զարգացման վրա բացասական ազդեցություն են ունեցել Խորհրդային Միությունից ժառանգություն ստացած տարածքային վեճերը՝ տվյալ պարագայում Մերձդնեստրի խնդիրը: Նման ժառանգություն էր թողվել մի շարք այլ նորանկախ երկրների ևս: Որոշներում դրանք պատերազմների պատճառ դարձան: Վրաստանում, օրինակ, ժողովրդավարացման գործընթացները ինչ-որ առումով խաթարվել են Աբխազիայի և Հարավային Օսեթիայի նկատմամբ վերահսկողության կորստից հետո, իսկ Հայաստանում պառլամենտարիզմի շարունակական զարգացմանը խոչընդոտել է Արցախյան հիմնախնդիրը, չդադարող պատերազմը: Ժողովրդավարական պառլամենտարիզմի ինստիտուցիոնալ և սահմանադրական կայացումն անհնար է առանց հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր, խորը և արմատական բարեփոխումների: Մոլդովայում պառլամենտարիզմի կայացման խոչընդոտներից են նաև սոցիալ-տնտեսական ճգնաժամը, իրավական նիհիլիզմի ավանդույթները: Երբեմն, հասարակական զարգացման թերությունները կապվում են վատ օրենքների հետ: Սակայն, եթե հասարակության անդամները թերահավատ են օրենքի նկատմամբ, լավագույն օրենքն անգամ չի կարող նպաստել իրավական պետության զարգացմանը: Մոլդովան առաջընթաց է գրանցել ժողովրդավարացման գործում,

սակայն աչքի է ընկնում տնտեսական զարգացման ցածր մակարդակով, սոցիալ-քաղաքական արդիականացումը այս երկրում դեռ չի ավարտվել:

Պառլամենտարիզմի ձևավորման շրջանը, ինչպես հետխորհրդային մյուս փոխակերպվող երկրների պարագայում, այնպես էլ ՀՀ-ում համընկնում էր բազմավեկտոր, փոխկապված իրադարձություններով լեցուն քաղաքական փոխակերպման գործընթացի հետ: Քաղաքական փոխակերպման ընթացքը կանխորոշող կարևոր գործոնների դերում էին քաղաքական և իշխանական հարաբերությունների բնույթը, պատմական ավանդույթները, հայաստանյան հասարակության սոցիալական դրությունը, քաղաքացիների քաղաքական մասնակցության աստիճանն ու քաղաքական գիտակցության մակարդակը, սոցիալ-պատմական, հոգևոր-մշակութային, քաղաքակրթական և այլ նախապայմանները: Նշված նախադրյալների առկայությամբ պայմանավորվեց նաև մեր երկրում ժողովրդավարական արժեքների և գաղափարների իրագործումը: Բացի դրանից՝ ՀՀ-ում քաղաքական փոխակերպման բարդ ու հակասական գործընթացն ուղեկցվում էր քաղաքական կյանքի կոնֆլիկտայնության բարձր աստիճանով, իշխանության անձնավորվածությամբ, փոխակերպման գործընթացներում իշխանական քաղաքական առաջնորդների միանձնյա որոշումների կայացման դրսևորումներով, պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների կոնֆլիկտային հարաբերություններով: Քաղաքական փոխակերպման վերը նշված առանձնահատկությունները մեծապես ազդեցին նորանկախ ՀՀ-ում պառլամենտարիզմի կայացման ընթացքի և արդյունքների վրա:

Ժամանակակից հայկական պառլամենտարիզմի էվոլյուցիայի վերլուծության արդյունքում կարելի է առանձնացնել հայկական պառլամենտարիզմի զարգացմանը խոչընդոտող որոշ գործոններ, ինչպես նաև մատնանշել դրական միտումներ: Առաջինի թվում կարելի է նշել ուժեղ կենտրոնացված իշխանության ձգտումը, քաղաքական մշակույթի և գիտակցության ոչ բարձր մակարդակը, հայրիշխանական մշակույթի արմատավորվածությունը: Հետանկախության շրջանում հայկական պառլամենտարիզմի զարգացմանը խանգարող գործոններից են եղել նաև խորհրդարանական ուժեղ ընդդիմության բացակայությունը, ձևական կոալիցիաների ձևավորումը, ընդդիմադիր կուսակցությունների միջև կոնսենսուսի բացակայությունը, բնակչության վստահության ոչ բարձր մակարդակը ներկայացուցչական իշխանության նկատմամբ: Հայկական պառլամենտարիզմի զարգացման վրա ազդել է խորհրդարանականների՝ իրենց աշխատանքին ոչ որպես մասնագիտության վերաբերվելը:

Դրական գործոնների թվում կարելի է նշել խորհրդարանի պրոֆեսիոնալացումը: ԱԺ-ի առանձին պատգամավորներ սովորել են համագործակցել զանգվածային լրատվության միջոցների, քաղաքացիական հասարակության սեկտորի հետ, աչքի են ընկնում օրենսդրական գործունեությամբ զբաղվելու ունակություններով, լավ կազմակերպվածությամբ, կարգապահությամբ, հստակ գործողությունների պլանով, սեփական ծրագրերով: Նկատվում է խորհրդարանականների երիտասարդացման, միջին դասի ներկայացուցիչների ավելացման միտում: Միևնույն ժամանակ պառլամենտարիզմի զարգացումը ՀՀ-ում որոշակիորեն եվրոպական միտումներ ունի:

Հայկական կուսակցական համակարգի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ այն հեռու է կատարյալ լինելուց: ՀՀ կուսակցական համակարգի զարգացման վրա վնասակար ազդեցություն են ունեցել քաղաքագիտական գրականության մեջ հայտնի, այսպես կոչված, «իշխանության կուսակցությունները»: Վերջիններիս՝ քաղաքական դաշտը մենաշնորհելու քաղաքականությունը մրցակցային անհավասար պայմաններ է ստեղծել մյուս կուսակցությունների համար: Անհատակենտրոնության պատճառով ստեղծվել է մի իրավիճակ, երբ գաղափարական պայքարն իր տեղը զիջում է անձնական և կուսակցական շահերի բախման արդյունքում ի հայտ եկած պայքարին: Կարևոր հիմնախնդիր է կուսակցությունների ներքին ժողովրդավարության ապահովումը: ՀՀ կուսակցական համակարգի ոչ բավարար կայացվածության խնդիրների թվում կարելի է նշել այն, որ հասարակության ընկալումներում կուսակցությունները՝ որպես քաղաքական համակարգի կարևորագույն տարրեր, լեգիտիմության ցածր աստիճան ունեն: Կուսակցությունները պետք է դառնան քաղաքական բանավեճերի կենտրոնական դերակատարները, երկրի զարգացման համար ծրագրեր մշակողները: Դրանք պետք է լինեն քաղաքական կադրերի պատրաստման կարևորագույն մարմինները:

Այսպիսով, հետխորհրդային տարածքում պառլամենտարիզմի զարգացման միտումները հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն ընդգրկող երկրների առանձնահատկություններն ու դրանցում արձանագրված անցումային իրողությունները: Ինչպես տեսնում ենք, այստեղ պառլամենտարիզմի բնորոշ գծերից, միևնույն ժամանակ զարգացմանը խոչընդոտող առավել սուր խնդիրներից է իշխանության ճյուղերի կախվածությունը գործադիր թևից, մասնավորապես

նախագահից: Տարիներ շարունակ նախագահի դոմինանտ դերը, քաղաքական կյանքը՝ վերջինիս ձեռքում կենտրոնացնելը թուլացրել է իշխանության մյուս ճյուղերի նշանակությունը և ինչ-որ չափով խանգարել ժողովրդավարության խորացման գործընթացին:

Պետք է նկատի ունենալ, որ պառլամենտարիզմի կայացումն ու զարգացումը հետխորհրդային տարածության երկրներում տեղի է ունենում ոչ թե կայուն, այլ փոխակերպվող քաղաքական գործընթացի պայմաններում, որին հատուկ է անկայունությունն ու անսպասելիությունը:

Հետխորհրդային նորանկախ պետություններում պառլամենտարիզմի զարգացման ընթացքի վրա մեծ ազդեցություն է ունեցել փոխակերպման առաջին տարիներին իշխանություն ստացած խորհրդային կուսակցական դպրոցներով անցած քաղաքական առաջնորդների վարքը:

Քաղաքական գիտակցության ցածր մակարդակի պայմաններում կարճ ժամանակահատվածում ժողովրդավար դառնալու ձգտումը, երբեմն, հակառակ ազդեցության է բերել: Արևմուտքի երկրներում աբսոլյուտիզմի և ժամանակակից պառլամենտարիզմի միջև պատմական երկարատև շրջան է ընկած եղել: Հետխորհրդային որոշ երկրներում հաճախ փորձեր են արվում մի քանի քայլ առաջ ընկնել: Բայց ինչպես Ա. Թոքվիլն էր նշում. «Նա, ով ձգտում է շատ արագ հասնել ազատության, հայտնվում է ստրկության ուղիղ ճանապարհին»: Պառլամենտարիզմը զարգանում է այնտեղ, որտեղ կայուն ժողովրդավարական, իրավական, մշակութային ավանդույթներ և սոցիալ-տնտեսական ու քաղաքական նպաստավոր պայմաններ կան: Ուստի պատահական չէ, որ թուլացած խորհրդային կառուցակարգերի և երբեմն սկզբունքորեն

դրանց հակասող արևմտյան մոդելների միախառնումից ձևավորվել են հիբրիդային համակարգեր:

Բոլոր երկրների քաղաքական համակարգերին հատուկ է իներցիայի ուժով միակուսակցականության ձգտումը, ըստ այդմ թույլ է զարգացած կուսակցական համակարգը: Պառլամենտարիզմի կայացման համար այդքան կարևոր կուսակցական համակարգի զարգացման հիմնախնդիրը հետխորհրդային տարածության երկրներում տարիներ ի վեր չի կորցնում իր արդիականությունը:

Հետխորհրդային երկրների պառլամենտարիզմին բնութագրական դարձած հաջորդ նմանությունը, այսպես կոչված, «իշխանության կուսակցությունների» առկայությունն է: Որպես վերջիններիս օրինակներ կարելի է նշել «Միասնական Ռուսաստան», «Նոր Ադրբեջան», «Վրաստանի քաղաքացիների միություն», «Հայաստանի հանրապետական կուսակցություն», «Նուր Օթան» կուսակցությունները: Նշված կուսակցությունները տարբեր ժամանակահատվածներում համապատասխան երկրներում հիմնականում նախագահական իշխանության գործիքի դերակատարություն են իրականացրել և ինքնուրույն քաղաքական միավորներ չեն եղել:

Տարածաշրջանում պառլամենտարիզմի զարգացման ընթացքի վրա ազդող գործոններից մեկն էլ, ինչպես Արևելյան Եվրոպայի երկրների պարագայում, մի կողմից արտաքին կողմնորոշման ընտրության, մյուս կողմից արտաքին միջամտության հարցն է: Եվրոպական ինտեգրման գործընթացը 1990-ական թթ. երկրորդ կեսից սկսած մեծ թափ հավաքեց՝ առավելագույնին մոտենալով ԵՄ հինգերորդ ընդլայնման պահին՝ 2004-2007 թվականներին: Հետկոմունիստական երկրների հաջող ինտեգրման հեռանկարները մեծապես պայ-

մանավորված էին վերջիններիս քաղաքական զարգացման մակարդակով և ժողովրդավարական ինստիտուտների կայունությամբ: Եվրոպական ուղղությունը եղել է այդ երկրների արտաքին քաղաքականության օրակարգում: Ներկայումս, երբ վեր ենք հանում այդ տարածության քաղաքական համակարգերի ինստիտուցիոնալ զարգացմանը՝ Արևմուտքի աջակցության արդյունքները, նկատում ենք, որ բազմաթիվ երկրներ օժանդակություն են ցուցաբերել Արևելքի կոնսոլիդացման գործընթացներին, երիտասարդ ժողովրդավարությունների կայացմանը: Բնականաբար, սա, բացի բարոյական աջակցությունից, արտաքին քաղաքական շահերի արտահայտություն էր և «Սառը պատերազմի» ու Արևմուտք-Արևելք հակամարտության հաղթահարումից հետո Եվրոպայում մեկնարկած հիմնարար փոփոխությունների արդյունք:

Կարող ենք փաստել, որ հետխորհրդային տարածաշրջանի երկրներում փոխակերպման գործընթացը դեռևս չի ավարտվել: Ըստ այդմ՝ խորհրդարանի ինստիտուտը զարգացման անհրաժեշտություն ունի, քաղաքական համակարգերը դեռևս վերջնական տեսք չեն ստացել: Սրա մասին են վկայում տարածաշրջանի երկրներում կառավարման ձևերի հետևողական կատարելագործման գործընթացները, սահմանադրական փոփոխությունների իրականացումը, երբեմն էլ նոր սահմանադրությունների ընդունումը: Նախկին խորհրդային երկրների կողմից հռչակած ժողովրդավարական հասարակության կառուցման կուրսը, ըստ շատ տեսաբանների, ավարտին է հասցվել միայն Մերձբալթյան երկրների պարագայում, որտեղ ձևավորվել են կոնսոլիդացված ժողովրդավարություններ քաղաքական պլյուրալիզմի և մրցակցության բարձր մակարդակով: Բացի դրանից՝ այստեղ ամենավառն է

արտահայտվել «եվրոպական գործոնը»: Միևնույն ժամանակ հնարավոր չէ չնկատել, որ անցած տարիների ընթացքում հետխորհրդային մյուս երկրները առաջ են ընթացել փոխակերպման ճանապարհով տարբեր մոդելներով, տարբեր նպատակներով և տարբեր հաջողություններով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Ուսումնասիրել և վերհանել պառլամենտարիզմի տարածման խորքային պատճառները Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրներում:
2. Վեր հանել հետկոմունիստական երկրներում կերպափոխման և ժողովրդավարացման գործընթացների արտաքին գործոնները:
3. Դասակարգել և վերլուծել Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրների քաղաքական արդիականացման ներքին օրինաչափությունները:
4. Ուսումնասիրել տարածաշրջանի պետությունների կառավարման համակարգերի՝ Մ. Շուգարտի և Ջ. Քերիի դասակարգումը:
5. Վեր հանել և համալիր ուսումնասիրության ենթարկել հետխորհրդային երկրներում պառլամենտարիզմի զարգացմանը նպաստող հիմնական տնտեսական գործոնները:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Կերպափոխման և ժողովրդավարացման գործընթացների արտաքին գործոնները Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրներում:
2. Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական երկրների քաղաքական արդիականացման ներքին օրինաչափությունները:

3. Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական պետությունների կառավարման համակարգերի՝ Մ. Շուգարտի և Ջ. Քերիի դասակարգումը:
4. Հետխորհրդային երկրներում պառլամենտարիզմի զարգացմանը նպաստող տնտեսական գործոնները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Neumann F.,** Demokratischer und autoritärer Staat. Beiträge zur Soziologie der Politik, Frankfurt a. M., 1967, 237 S.
2. **Oberreuter H.,** Parlamentsreform, Probleme und Perspektiven in westlichen Demokratien, Passau, 1981, 259 S.
3. **Redslob R.,** Die parlamentarische Regierung in ihrer wahren und ihrer unechten Form. Eine vergleichende Studie über die Verfassungen von England, Belgien, Ungarn, Schweden und Frankreich, Tübingen, 1918, 186 S.
4. **Recker Marie-Luise,** Parlamentarismus in Europa, Berlin, 2004, 247 S.
5. **Scharp F.,** Demokratische Theorie zwischen Utopie und Anpassung, Konstanz, 1970, 93 S.
6. **Weber M.,** Politik als Beruf, file:///C:/Users/Hovo/Downloads/Weber%20Politik%20als%20Beruf.pdf, հասանելի՝ 15.06.2018:
7. **Zenker E. V.,** Der Parlamentarismus. Sein Wesen und seine Entwicklung, Leipzig, 1914, 230 S.
8. **Jennings I.,** Cabinet Government. Cambridge: Cambridge University Press, 1959, 598 p.
9. **Sedelius T.,** The Tug-of-War between Presidents and Prime Ministers: Semi-Presidentialism in Central and Eastern Europe, file:///C:/Users/Hovo/Downloads/Sedelius2006TheTugofWar.pdf, հասանելի՝ 10.10.2019:

Գիտական հոդվածներ

1. **Хубнер Е.,** Парламентаризм и представительная система // «Полис», 1992, №3, с. 40-44.
2. **Щербинин А.,** Зарождение и развитие парламентаризма, https://duma.tomsk.ru/content/1_zarozhdenie_i_razvitie_parlamentarizma, հասանելի՝ 18.06.2019:
3. **Шмитт К.,** Духовно-историческое состояние современного парламентаризма. Предварительные замечания, (О противоположности парламентаризма и демократии), Перевод с немецкого А. Ф. Филиппова, https://sociologica.hse.ru/data/2011/03/30/1211853314/8_2_2.pdf, հասանելի՝ 07.08.2019:
4. **Шугарт М., Керри Дж.,** Президентские системы.- Сравнительная политология. Хрестоматия, М., 1997, с. 198-246.
5. **Шульженко Ю.,** Исследование проблем парламентаризма в советский период, https://cyberleninka.ru/article/n/issledovanie-problem-parlamentarizma-v-sovetskiy-period, հասանելի՝ 15.02.2021:
6. **Яковлев М.,** Старейший парламент в Европе: история возникновения и развития, http://ext.spb.ru/images/files/13_Petr/-YakovlevMM_parlament.pdf, հասանելի՝ 12.06.2020:
7. **Aleksandrowicz D.,** Kulturelle Kosten der Transformation, https://www.europa-uni.de/de/forschung/institut/institut_fit/publikationen/discussion_papers/1998/98-03-Aleksandrowicz.pdf, հասանելի՝ 15.04.2020:
8. **Badura P.,** Parlamentarismus und parlamentarische Demokratie, https://epub.ub.uni-muenchen.de/9169/1/9169.pdf, հասանելի՝ 12.08.2019:
9. **Beichelt T.,** Die slawischen GUS-Staaten zwischen Autokratie und Demokratie, https://www.europa-uni.de/de/forschung/institut/institut_-fit/publikationen/discussion_papers/2001/01-05-Beichelt.pdf, հասանելի՝ 15.04.2020:

Համացանցային աղբյուրներ

1. Александр Лукашенко обеспечил себе пожизненное президентство, https://www.kommersant.ru/doc/515812, հասանելի՝ 25.04.2010:
2. Государственная Дума, http://duma.gov.ru/, հասանելի՝ 24.04.2020:
3. Государственность и безопасность: Грузия после "революции роз", Под редакцией Бруно Коппитерса и Роберта Легволда, https://carnegieendowment.org/files/9601statehood_russian.pdf, հասանելի՝ 14.08.2020:
4. Избирательная система в России: История и современность, https://www.prlib.ru/collections/467235, հասանելի՝ 24.05.2020:
5. История выборов в Государственную Думу в современной России, https://tass.ru/spravochnaya-informaciya/508433, հասանելի՝ 15.05.2020:
6. Итоги выборов народных депутатов Белорусской ССР 1990 года, https://naviny.online/rubrics/elections/1990/03/04/ic_articles_623_169942, հասանելի՝ 12.06.2020:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս պառլամենտարիզմը ժողովրդավարական պետությունների համար կարևոր երևույթ է: Յուրաքանչյուր երկրում այն գտնում է արտահայտման իր սեփական ձևը և բնորոշվում է տվյալ պետությանը հատուկ առանձնահատկություններով: Չնայած պատմական տարբեր ժամանակահատվածներում հանդիպած դժվարություններին և սրընթաց փոփոխվող միջազգային կյանքին՝ պառլամենտարիզմը հարթել է իր տեղը և շարունակում է մնալ քաղաքական կյանքի և ժողովրդավարության զարգացման հիմքերից մեկը: Քաղաքական տեսության մեջ այն փաստացիորեն նույնացվում է ժողովրդավարական արժեքների հետ: Պատմական փորձը ցույց է տալիս, որ պառլամենտարիզմը լայն հնարավորություններ է տալիս վեր հանել տարբեր սոցիալական խմբերի շահերը: Միաժամանակ փոխակերպվող երկրների քաղաքական ինստիտուտների անկայուն բնույթը մի շարք հարցեր է ծնում, մասնավորապես ո՞ր պայմանների, ինստիտուտների առկայությունն է համակարգը դարձնում ժողովրդավարական: Պառլամենտարիզմի վերլուծության առանձնահատկություններից մեկն այն է, որ ներկայումս հնարավոր չէ այն դիտարկել ժողովրդավարության հիմնահարցի շրջանակից դուրս: Իրական պառլամենտարիզմ կարող է գոյություն ունենալ միայն ժողովրդավարության պայմաններում, երբ խորհրդարանը՝ պառլամենտարիզմի կարևորագույն բաղադրատարրը, դառնում է այն վայրը, որտեղ տեղի է ունենում դեմոկրատիայի տեսության և պրակտիկայի միաձուլում: Ժողովրդավարությունը ժողովրդի կամքը արտահայտող վարչակարգ է, խորհրդարանը՝ ժողովրդի կամքն արտահայտող մարմին:

Պառլամենտարիզմը ծագում և գոյություն է ունենում այն ժամանակ, երբ խորհրդարանն օժտվում է օրինաստեղծ լիազորություններով, կառավարության ձևավորման և վերջինիս նկատմամբ վերահսկողություն իրականացնելու մեխանիզմներով: Իրական ժողովրդավարական սկզբունքների վրա հենված խորհրդարանի ձևավորումն ու գործառնումը բարդ և ժամանակատար գործընթաց է: Ժողովրդավարական կարգի սպառնալիքի պարագայում հենց խորհրդարանն է հարվածի տակ ընկնում: Առանց իրական գործառնող խորհրդարանի անհնար է կառուցել ժողովրդավարական իրավական պետություն, ստեղծել օրենսդրության և իրավունքի արդյունավետ համակարգ, հասնել քաղաքական կուսակցությունների զարգացմանը:

Summary

PARLIAMENTARISM IN THE MODERN WORLD

Khosrovadukht G. Azatyan

The methodological manual “Parliamentarism in the Modern World” presents the goals and objectives of the course, as well as scientific literature related to the theoretical problems of Parliamentarism. The work examines the theoretical and conceptual foundations of Parliamentarism, presents existing approaches to the phenomenon of Parliamentarism in political science, and analyzes the prerequisites for the formation of Parliamentarism in the countries of Eastern Europe and the post-Soviet space. In this regard, the educational manual could be useful from the point of both theoretical and practical researches.

The manual is intended for university students and specialists in the field of Parliamentarism.

Резюме

ПАРЛАМЕНТАРИЗМ В СОВРЕМЕННОМ МИРЕ

Хосровадухт Гарегиновна Азатян

В учебно-методическом пособии «Парламентаризм в современном мире» представлены цели и задачи курса, а также научная литература, относящаяся к теоретическим проблемам парламентаризма. В работе изучены теоретические и концептуальные основы парламентаризма, представлены существующие в политической науке подходы к феномену парламентаризма, проанализированы предпосылки становления парламентаризма в странах Восточной Европы и на постсоветском пространстве. В связи с этим учебно-методическое пособие может быть полезно как для теоретических, так и практических исследований.

Пособие предназначено для студентов вузов и специалистов по парламентаризму.

ԽՈՍՐՈՎԱԴՈՒԽՏ ԱԶԱՏՅԱՆ

ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

(Ուսումնամեթոդական ձեռնարկ)

АЗАТЯН ХОСРОВАДУХТ ГАРЕГИНОВНА

ПАРЛАМЕНТАРИЗМ В СОВРЕМЕННОМ МИРЕ

(учебно-методическое пособие)

KHOSROADUKHT AZATYAN

PARLIAMENTARISM IN THE MODERN WORLD

(methodological manual)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Ստորագրված է տպագրության՝ 13.12.2024:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 6.5:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am